# Մասիս Շաբաթաթերթ

34ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 33 (1683) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 13, 2014
VOLUME 34, NO. 33 (1683) SATURDAY, SEPTEMBER 13, 2014

MASSIS Weekly
1060 N. Allan Ave. Suite 101
Pasadena, California 91104

## Յունաստանի Խորհրդարանը Վաւերացուց Ցեղասպանութեան Ժխտումը Պատժող Օրինագիծը



*Յունաստանի Խորհրդարանն Սեպտեմբերի 9-ին վաւերացուց Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծը, որու քուէարկութիւնը մի քանի անգամ յետաձգուած էր, փոփոխութիւններ կատարուելու համար:*

*Օրինագծին կողմ քուէարկած են 54, դէմ՝ 42, ձեռնպահ 3 պատգամաւոր:*

*Օրինագծի առաջին տարբերակին մէջ ընդհանուր ձեւակերպումներ կային միայն, սակայն հետագային փոփոխութիւններ կատարելով աւելցուեցաւ, որ խօսքը հայերու եւ պոնտոսցի յոյներու ցեղասպանութիւններու մասին է: «Հայերու կամ յոյներու ցեղասպանութեան հանդէպ անյարգալից կամ զանոնք նուաստացնող որեւէ փորձ պէտք է դիտարկուի որպէս յանցագործութիւն»,-ըսուած է փաստաթուղթին մէջ:*

*Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան ողջունեց Ցեղասպանութիւններու ժխտումը քրէականացնելու օրինագիծի վաւերացումը՝ Յունաստանի Խորհրդարանին կողմէ:*

*«Այս քայլով Յունաստան անգամ մը եւս ապացուցեց իր հաւատարմութիւնը համամարդկային արժէքներուն եւ կարեւոր քայլ կատարեց՝ ցեղասպանութիւններու եւ մարդկութեան դէմ այլ ծանր յանցագործութիւններու կանխարգիլման ուղղութեամբ«, ըսաւ Նալպանտեան:*

*Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Գալուստ Սահակեան շնորհակալութիւն յայտնեց Յունաստանի Խորհրդարանին՝ Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծը վաւերացնելուն համար: Իսկ Ազգային Ժողովի փոխ նախագահ Էտուարտ Շարմազանով յայտարարեց, որ Հայաստան երախտապարտ է Յունաստանին: Անոր խօսքով, նշեալ օրէնքի ընդունումը ոչ միայն Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող քայլ է, այլեւ նոր ցեղասպանութիւններու եւ յանցագոր ծութիւններու իրականացումը կանխող միջոց:*

*Միւս կողմէ, Ֆրանսայի Ծերակոյտի հայ-ֆրանսական համագոր ծակցութեան խումբի փոխ նախագահ Ռընէ Ռուքէ յայտարարեց, որ Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտ խոստացած է իր պաշտօնավարութեան տարիներուն լուծել Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնելու օրինագիծին հարցը: Ռուքէի խօսքով, այս հանգրուանին իրաւական որոշ խնդիրներ կան՝ կապուած հարցը Ֆրասայի Ազգային Ժողովին մէջ ներկայացնելու հաւանականութեան հետ, սակայն հոլովոյթը կը շարունակուի:*

*Յայտնենք, որ ֆրանսացի Ազգային Ժողովի երեսփոխան Վալերի Պուայէ ներկայացուցած է ժխտումը քրէականացնող օրինագիծի նոր բանաձեւ մը:*

## Սերժ Սարգսեան. «Մենք Սկսում Ենք Քաղաքական Նոր Սեզոն»



*Նախագահ Սերժ Սարգսեանի ելոյթը ՀՀԿ Խորհուրդի նիստի ընթացքին*

*Իշխող Հանրապետական կուսակցութեան Խորհուրդի նիստի ընթացքին ունեցած իր ծաւալուն ելոյթին մէջ, Հայաստանի նախագահ եւ իշխող ՀՀԿ կուսակցութեան ղեկավար Սերժ Սարգսեան որպէս հանրապետականներու առաջնահերթ խնդիր՝ կոչ ըրած է ապահովել խորհրդարանի բնականոն աշխատանքը:*

*«Յարգելի գործընկերներ, մենք սկսում ենք քաղաքական նոր ու աւելի ակտիւ շրջան, եւ ինչպէս ընդունուած է քաղաքականութեան մէջ՝ մենք սկսում ենք քաղաքական նոր սեզոն: Խորհրդարանում, կառավարութիւնում, տեղական ինքնակառավարման մարմիններում եւ ընդհանրապէս մեր երկրի հասարակական-քաղաքական կեանքում վճռորոշ է հանրապետականների դերակատարութիւնը, հետեւաբար՝ ամառային աւելի հանգիստ եւ համեմատաբար պասիւ ամիսներից յետոյ մենք պէտք է հնարաւորինս արագ վերականգնենք մեր ակտիւ աշխատանքային միջավայրն ու նոր թափ հաղորդենք մեր ծրագրերի իրականացմանը», ըսած է նախագահը իր կուսակիցներուն:*

*«Խորհրդարանական մեր խմբակցութեան աշխատանքը, ինչպէս միշտ, լինելու է թէ ողջ հասարակութեան եւ թէ մեր առանձնայատուկ ուշադրութեան կենտրոնում: Ես գիտեմ, որ մեր խմբակցութիւնում եւ ընդհանրապէս խորհրդարանում ամառային ամիս-*

*Տար.ը էջ 5*

## ԱՄՆ կ'ողջունէ Սերժ Սարգսեանի մասնակցութիւնը ՆԱԹՕ-ի Գագաթաժողովին

*Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Հեֆերն յայտարարեց, որ Միացեալ Նահանգները եւ անոր դաշնակիցները կ'ողջունեն Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի մասնակցութիւնը անցեալ շաբթուայ ընթացքին Ուէյլսի մէջ տեղի ունեցած ՆԱԹՕ-ի գագաթաժողովին:*

*«Ուէյլսի մէջ ԱՄՆ պետքարտուղար Քերրին առիթ ունեցաւ հանդիպելու նախագահներ Սարգսեանի ու Ալիեւի հետ այն նպատակով, որ հակամարտութեան լուծման ուղղութեամբ ջանքեր ձեռնարկուին», - ըսած է Ճոն Հեֆերն՝ աւելցնելով. - «Այս խնդիրով ՆԱԹՕ-ն առաջնորդող դերակատարում չունի, այս հարցով առաջնորդող դերակատարութիւնը կը պատկանի ԵԱՀԿ-ին: ՆԱԹՕ-ն կը սատարէ ԵԱՀԿ-ին, ընթացող գործընթացը եւ այն սկզբունքները, որոնք միտուած են այս հակամարտութեան խաղաղ կարգաւորման»:*

*Անդրադառնալով Ճոն Քերրիի մասնակցութեամբ Սարգսեան - Ալիեւ հանդիպումին եւ Նիւ Եորքի մէջ սպասուող Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահներու հանդիպումին, դեսպանը ըսած է,- «Ուէյլսի մէջ կայացած հանդիպումը շատ կարեւոր էր, քանի որ նախագահները ու պետական քարտուղար Քերրին հանդիպեցան: Քերրին կարեւոր հնարաւորութիւն ունեցաւ անձնապէս ներգրաւուելու բանակցութիւններուն մէջ եւ ան գնահատեց այդ առիթը: Մենք կը գնահատենք, որ երկու նախագահներն ալ ժամանեցին Ուէյլս: Սակայն յստակ չէ, որ երկու նախագահները կը գտնուին Նիւ Եորք մէջ, վստահ չեմ, որ Նիւ Եորքի մէջ հանդիպում կ'ըլլայ»:*

*«Մենք կը կարծենք, որ երկու ղեկավարներու յաջորդ հանդիպումը տեղի կ'ունենայ Ֆրանսիայի մէջ, նախագահ Օլանտի հրաւէրով:*

*Տար.ը էջ 4*

## Նիւ Եորք Թայմզ Համաձայն Ատրպէյճան Ազդեցութիւն կը Գնէ Ուաշինկթընի մէջ

*Ամերիկեան ազդեցիկ* «New York Times» *թերթը փաստաթղթեր հրապարակեց, որոնք մանրամասն կը ներկայացնեն, թէ ինչպէս Ատրպէյճան Ուաշինկթընի մէջ ազդեցութիւն կը գնէ:*

2012 *թուականին Ատրպէյճանի կառավարութիւնը Ուաշինկթընի մէջ վարձած է լոպպիստական գործունէութեամբ զբաղուող ընկերութիւն մը՝ յստակ նպատակ ունենալով ընդլայնել «ուղեղային կեդրոններու» հետ կապերը, որպէսզի փորձի ազդէ Միացեալ Նահանգներու հասարակական կարծիքին վրայ եւ հասկցնել տայ, որ Ատրպէյճան ապահովութեան հարցերով Ամերիկայի կարեւոր գործընկեր է:*

*Ըստ Թերթի հրապարակման, Ատրպէյճանի պետական նաւթային* SOCAR *ընկերութեան միջոցով նաեւ գումարներ կը նուիրէ ազդեցիկ* «Atlantic Council» *վերլուծական կեդրոնին: Սակայն, այս Կեդրոնը յայտարարած է, որ Ատրպէյճանի նուիրատուութիւնը մեծ չէ եւ Կեդրոնի ծրագիրներուն վրայ ազդեցութիւն չունի:*

«New York Times»*-ը, սակայն կը յայտնէ, որ Ուաշինկթընի մէջ գործող մի քանի վերլուծական կեդրոններ վերջին տարիներուն կազմակերպել են միջոցառումներ, որոնք կեդրոնացած են այնպիսի թեմաներու ուղղութեամբ, որոնք առաջ տանելու համար վարձած են ատրպէյճանական լոպպիստներ: Ատոնց շարքին է* «Atlantic Council»*-ի կազմակերպած միջոցառումը, որու ընթացքին կարեւոր նկատուած է Ատրպէյճանի ջանքերը՝ որպէս ՆԱԹՕ-ի գործընկեր, անոր նշանակութիւնը ցոյց տալու նպատակով: Այս միջոցառման մասնակիցները, որոնց շարքին՝ Պետական Քարտուղարութեան ներկայացուցիչը, գովաբանած են Ատրպէյճանին՝ որպէս ԱՄՆ-ի համար անվտանգութեան հարցերով կարեւոր դաշնակից:*

*Թերթի տեղեկութիւններուն համաձայն՝ այս տարի Ատրպէյճան վարձած է մէկ այլ լոպպիստական կազմակերպութիւն՝* «Podesta Group»*-ին, որ կը ղեկավարուի Օպամայի վարչակազմի մտերիմ դաշնակից Թոնի Փոտեստան:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Սերժ Սարգսեանը հասկացաւ յեղաշրջման սխեման

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Աժ աշնանային նստաշրջանի մեկնարկին լրագրողներն արձանագրել են, որ ՀՀԿ-ական պատգամաւորները չեն կատարում Սերժ Սարգսեանի յորդորն ու լքում են խորհրդարանի նիստը՝ գրանցուելուց յետոյ: Պատգամաւորներն ու Սերժ Սարգսեանն իհարկէ յետոյ կ՚ասեն, թէ պատգամաւորի աշխատանքը միայն նիստերի դահլիճում չէ, այլ նաեւ աշխատասենեակում: Արդէն իսկ ասում են:*

*Բայց, հանրութեանը ծանօթ է պատկերը, երբ ՀՀԿ-ականները պարզապէս արհամարհում են Սերժ Սարգսեանի յորդորները: Օրինակ, նա ՀՀԿ համագումարներից մէկում յայտարարել էր, թէ Հայաստանի քաղաքացու հետ պէտք է «դուք»-ով խօսել: Դրանից յետոյ, միայն Աժ-ում, միայն լրագրողներին կարկառուն ՀՀԿ-ականները էլ սպառնացել են ծնօտ կոտրել, էլ կազիոլ են անուանել, էլ կապիկ, քաղաքացիներին ոչխար են անուանել, դեբիլ, անուանել են ապրանք, համբալ: Եւ որեւէ մէկը դրա համար պատասխանատուութեան, անգամ բարոյա-խրատական պատասխանատուութեան չի ենթարկուել:*

*չակն» է, որտեղ եփւում են բոլոր հարցերը, որոշւում են ճիշտն ու սխալը, արդարն ու անարդարը, իշխանութիւնն ու չիշխանութիւնը, որտեղ սահմանւում են քուոտաներն ու բաժանւում են ռեսուրսները, որտեղ գնահատւում են իշխող համակարգի դէմ վտանգներն ու սահմանւում է իւրաքանչիւրի դերը դրանց դիմագրաւման հարցում:*

*ՀՀԿ-ականներն այդ իմաստով Սարգսեանին ճիշտ են հասկացել: Բայց, նաեւ ճիշտ է հանրութիւնը, որ կարծում է, թէ նրան չեն լսել: Իհարկէ, նրա յանձնարարութիւնը չեն կատարում, բայց հենց այդ պատճառով՝ յանձնարարութիւն որպէս այդպիսին չկայ: Սերժ Սարգսեանը չունի ՀՀԿ-ականներին յանձնարարելու ռեսուրս: Նա կարող է միայն առաջարկել: Գուցէ նա կարող է այնպիսի բաներ առաջարկել, որից ՀՀԿ-ականները հրաժարուել չեն կարող: Բայց միեւնոյն է, նա առաջարկելու ռեսուրսից աւելին չունի:*

*Ընդհանրապէս, Հայաստանի իշխող համակարգը յանձնարարութիւնների համակարգ չէ: Այն դասական խորհրդարանական համակարգ է, պարզապէս ոչ թէ հանրային, այլ համակարգային իմաստով: Յանձնարարութիւններով կառավարուող համակարգն աւելի քան երկու տասնամեակ «էւոլիւցիա» չէր ապրի եւ չէր բիւրեղանայ, չէր մարսի Մարտի 1, աւելին՝ այդ Մարտի 1-ի համար պատասխանատուներից ոմանք չէին հասցուի մինչեւ հասարակութեան փրկչի կարգավիճակի:*

**Սերժ Սարգսեանի ելոյթն ունի նաեւ համակարգային պրիզմա: Երբ նա կոչ է անում բոլորին գնալ խորհրդարան եւ մասնակցել աշխատանքներին, դա ամենեւին չի նշանակում գնալ խորհրդարան եւ մասնակցել աշխատանքներին, այլ նշանակում է չմոռանալ բացարձակ մեծամասնութիւն լինելու մասին եւ ըստ այդմ հասարակական-քաղաքական կեանքի որեւէ հատուածում չզիջել առաւելութիւնը**

*Սակայն, երեւոյթն ունի նաեւ հակառակ կողմ: ՀՀԿ-ականները Սերժ Սարգսեանի խօսքն արհամարհում են այդ խօսքի այսպէս ասած հանրային պրիզմայով դիտարկման տեսանկիւնից:*

*Բայց Սերժ Սարգսեանի ելոյթն ունի նաեւ համակարգային պրիզմա: Երբ նա կոչ է անում բոլորին գնալ խորհրդարան եւ մասնակցել աշխատանքներին, դա ամենեւին չի նշանակում գնալ խորհրդարան եւ մասնակցել աշխատանքներին, այլ նշանակում է չմոռանալ բացարձակ մեծամասնութիւն լինելու մասին եւ ըստ այդմ հասարակական-քաղաքական կեանքի որեւէ հատուածում չզիջել առաւելութիւնը:*

*Սերժ Սարգսեանին հետաքրքիր չէ՛ խորհրդարանում կը լինի դա, թէ փողոցում, կամ որեւէ ռեստորանում, սաունայում: Սերժ Սարգսեանը «տոտալ ֆուտբոլ» է պահանջում ՀՀԿ-ից, իսկ դա չի նշանակում լինել միայն խորհրդարանում: Դա նշանակում է լինել ամէնուր: Խորհրդարան հասկացութեան հանրային եւ համակարգային իմաստներն այլ են:*

*Հանրային իմաստով դա երկրի թիւ մէկ քաղաքական օրգանն է, օրէնսդիր մարմինը: Համակարգային իմաստով խորհրդարանը «օբշակն» է, ...*

*Այդ ամէնն արդիւնքն է նրա, որ յանձնարարութիւնների մեթոդաբանութեան փոխարէն, Հայաստանի իշխող համակարգը կառավարուել է մաքուր դեմոկրատական սկզբունքով՝ առաջարկութիւններ, որոնցից ամենահամոզիչներն ընդունուել են «օբշակում»:*

*Պատահական չէ, որ ներհամակարգային ճգնաժամի շրջանում ոչ թէ օլիգարխիկ իշխանութիւնն ընդհանրապէս էր կասկածի եւ քննադատութեան տակ առնւում, այլ «մէկ օլիգարխի» իշխանութիւնը, այսինքն «խորհրդարանականից» անցումը «նախագահական» իշխանութեան:*

*Սերժ Սարգսեանը հասկացաւ, թէ ինչն է խնդիրը, եւ դրա համար էլ այժմ առաջարկում է անցում խորհրդարանական իշխանութեան: Պարզապէս նա առաջարկում է սահմանադրական անցում, իսկ դա էապէս փոխում է*

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# «Կադրային ռեզերուի»

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*

*Եթէ ինձ հարցնեն, թէ ինչպիսի կադրային դրական տեղաշարժեր են տեղի ունեցել վերջին տարիներին, ես վստահաբար կը պատասխանեմ. այն, որ Վարդան Ղուկասեանին հնարաւորութիւն չտրուեց ընտրուել Գիւմրիի քաղաքապետ, եւ այն, որ Սուրիկ Խաչատրեանն ազատուել է Սիւնիքի մարզպետի պաշտօնից: Յատկապէս վերջին որոշումը հասունացել էր վաղուց՝ մինչեւ նախկին մարզպետի տան մօտ տեղի ունեցած սպանութիւնը, որի հանգամանքներն, ինձ թւում է, միտումնաւոր կոծկւում են մեր իրաւապահներն ու դատարանները:*

*Բազմաթիւ բացասական կադրային նշանակումներն, իհարկէ, գերակշռում են այդ երկու դրական դէպքերը: Օրինակ՝ ինձ համար հասկանալի չէ, թէ ինչպիսի առանձնայատուկ տաղանդներով է օժտուած Արամ Յարութիւնեանը, որը սկզբում ՕԵԿ-ի քուոտայով զբաղեցնում էր քաղաքաշինութեան նախարարի պաշտօնը, այնուհետեւ առանց որեւէ քուոտայի՝ բնապահպանութեան, իսկ հիմա դարձել է Կոտայքի մարզպետ: Ի՞նչ է, վերածննդի տիտա՞ն է, որ հաւասարապէս հասկանում է տարբեր ոլորտներից: Եւ նման «անխորտակելիներ», որոնք ոչ մի բանով աչքի չեն ընկել տարիների, տասնամեակների ընթացքում, շարունակում են իրենց պաշտօնավարութիւնը:*

*Որտեղի՞ց են պետութիւնները վերցնում իրենց «կադրային ռեզերվը»: Խորհրդային շրջանում կար յատուկ աստիճանակարգ, որը սկսւում էր, ենթադրենք, կոմերիտմիութեան շրջկոմի հրահանգիչից՝ լաւ թէ վատ, կաշառքով, թէ առանց կաշառքի պետական կառավարման դպրոց էր: Աւելի շահեկան էր, երբ մարդիկ ղեկավար պաշտօնների էին անցնում արտադրութիւնից (օրինակ՝ Կարէն Դեմիրճեանը). այս կամ այն արտադրանքի նրբութիւնները հասկանալն աւելի գերադասելի էր, քան գաղափարախօսական թեմաներով «լեզուին զոռ տալը»: Աստիճանակարգեր կան նաեւ զարգացած երկրներում՝ իհարկէ, առանց խորհրդային գաղափարախօսական բաղադրիչների:*

*1988-90 թուականների յեղափոխութիւնից յետոյ Հայաստանում իշխանութեան եկան վառ անհատականութիւններ՝ մարդիկ, որոնք պետական պաշտօն էին զբաղեցնում համոզմունքներից ելնելով, ոչ թէ ինչ-որ կարիերիստական նկրտումներով: Պարզ է, որ նրանց վաղ թէ ուշ պէտք է փոխարինէին աւելի ձանձրալի, աւելի գորշ մարդիկ: Ռեզերվները քիչ էին՝ կամ նոյն կոմունիստները, որոնց պատկերացումները, որպէս կանոն, հնացած էին, կամ էլ «կռուած տղերքը» եւ նրանք, ում այդ «կռուածները» (իրական, թէ սուտ) հովանաւորում էին:*

*Դա էլ լաւագոյն տարբերակը չէր. խնդիրը «ուժային ճանապարհով» լուծելու սովորութիւնը տեղափոխւում էր քաղաքացիական կեանք, իսկ «հովանաւորեալները» սովորաբար մի կողմից՝ թուլակամ էին, միւս կողմից՝ կարողանում էին «կռուողներին» խաբել: Արդիւնքում պետական կառավարման մէջ 20 տարում ձեւաւորուել է կատարեալ ցինիզմի, քրէականացուած մթնոլորտ:*

*... Եթէ Սուրիկ Խաչատրեանը վերանշանակուի Սիւնիքի մարզպետի պաշտօնին, դա կը լինի, ինչպէս սիրում են գրել մեր հրապարակախօսները, «շառաչուն ապտակ» հասարակութեանը:*

*«ԱՌԱՒՕՏ»*

*խնդրի էութիւնը: Որովհետեւ այդ դէպքում շահում է նա, ով տուեալ պահին ունի խորհրդարանական մեծամասնութիւն:*

*Բանն այն է, որ դէ ֆակտօ «օբշակի» իշխանութեան անվտանգութեան եւ ժողովրդավարականութեան երաշխիքը հենց դէ իւրէ նախագահի իշխանութիւնն է: Որովհետեւ այդ դէպքում նախագահը «արբիտրն» է, ինչպէս օրինակ Ռոբերտ Քոչարեանին Գագիկ Ծառուկեանն էր բնորոշել:*

*Երբ դէ ֆակտօ «օբշակի», այսինքն դէ ֆակտօ խորհրդարանական կառավարումը ուղեկցւում է արդէն դէ իւրէ խորհրդարանական կառավարումով, ապա այստեղ արդէն տուեալ պահի խորհրդարանական մեծամասնութեան դիրքը դառնում է գրեթէ անխոցելի, որովհետեւ արբիտրը դառնում է հենց այդ մեծամասնութիւնը, եւ փաստացի էապէս նուազում է ներիշխանական յեղաշրջման միջոցով մեծամասնութեան անկանոն կամ «դասալիք» շարժերի հաւանականութիւնը:*

*Սերժ Սարգսեանը դա է առաջարկում իշխող մեծամասնութեանը, եւ այն, որ մեծամասնութիւնը կրկին լքում է նիստերի դահլիճը, վկայում է, որ առաջարկը հասկացել են:*

*«ԼՐԱԳԻՐ»*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### Սահմանադրական Բարեփոխումները Անցում՝ Խորհրդարանական Համակարգին

Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը նախագահին կը ներկայացուի Հոկտեմբերի կէսին: Այդ մասին յայտարարեց սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովի անդամ Գէորգ Դանիէլեանը:

Յիշեցնելով, որ Սեպտեմբերի 4-ին լրացաւ յանձնաժողովի աշխատանքների մէկ տարին՝ Դանիէլեանը նշեց, որ այդ ընթացքում մեծ աշխատանք է տարուել, մշակուել է հայեցակարգի նախագիծը եւ ներկայացուել հասարակական քննարկմանը: Քննարկումներն անցել են երկու փուլով: Առաջին փուլում անցել են փորձագիտական լսարանում. մասնագէտներն իրենց կարծիքն են յայտնել եւ առաջարկութիւններով հանդէս եկել: Քննարկումների երկրորդ փուլը աւելի լայն է եղել՝ մայրաքաղաքի եւ մարզերի հանրութեան մասնակցութեամբ: Զուգահեռաբար ամփոփուել են փորձագէտների առաջարկութիւնները: Ինչպէս նշեց Գէորգ Դանիէլեանը, Օգոստոսի վերջին ստացուել է ամփոփիչ փաստաթուղթը, որը կը ներկայացուի Վենետիկեան յանձնաժողովին: Վենետիկեան յանձնաժողովի քննարկումները կը կայանան Փարիզում՝ Սեպտեմբերի 19-21-ին: Դրանից յետոյ փաստաթուղթը վերջնական տեսքով կը տրամադրուի երկրի նախագահին:

Գէորգ Դանիէլեանի խօսքով՝ յանձնաժողովի անդամները աշխատել են առաւելագոյնս կարգաւորել նախկինում տարաձայնութիւններ առաջացնող հարցերի ձեւակերպումները: Որոշ հարցերի շուրջ, այնուամենայնիւ, առկայ են տարաձայնութիւններ, սակայն յանձնաժողովի անդամը կարծում է, որ դեռ ժամանակ կայ լուծումներ որոնելու համար: Նախկինում լուրջ տարաձայնութիւնների առաջացնող հարցերից մէկն էլ կառավարման խորհրդարանական համակարգին անցումն է: Յանձնաժողովում նախապատուութիւնը տուել են դրական որոշմանը, այսինքն՝ կառավարման տուեալ համակարգին անցմանը:

Գէորգ Դանիէլեանը կարծում է, որ անցած քննարկումները եղել են արդիւնաւէտ, սակայն որոշ վերապահումներով, մասնաւորապէս՝ քաղաքական ուժերի հետ քննարկումների մասով: Այդուհանդերձ, յանձնաժողովի ներկայացուցիչը ենթադրում է, որ քաղաքական ուժերի հետ քննարկումները ակտիւացնելու համար դեռ ժամանակ կայ:

Ինչ վերաբերում է սահմանադրական բարեփոխումների ոչ համաժամանակեայ անցկացմանը, Գէորգ Դանիէլեանը նշեց, որ բարեփոխումների հակառակորդները լուրջ հակափաստարկներ առաջ չեն քաշում:

### Ս.Դեմիրճեան. Հայաստանին Պէտք Են Արդար Ընտրութիւններ Եւ Ազնիւ Իշխանութիւն

Հայաստանում կուտակուած խնդիրները շատ են եւ դրանք առաջին հերթին պայմանաւորուած են տարիներ շարունակ իրականացուող հակաժողովրդական քաղաքականութեամբ եւ ապաշնորհ կառավարմամբ: Այդ մասին Ազգային Ժողովում յայտարարել է Հայ Ազգային Կոնգրէս խմբակցութեան պատգամաւոր Ստեփան Դեմիրճեանը յայտարարութիւնների ժամին:



ՀՀ Ազգային Ժողովի պատգամաւոր Ստեփան Դեմիրճեան

«Ինչպէս գիտէք ԱԺ 4 խմբակցութիւններ 12 առաջնահերթ պահանջներ են ներկայացրել իշխանութիւններին՝ ուղղուած երկրի տնտեսութեան առողջացմանը եւ քաղաքական համակարգի կայացմանը: Սա չի նշանակում, որ երկրի առջեւ կանգնած խնդիրները սահմանափակւում են այդ 12 կէտերով:

Կուտակուած խնդիրները շատ են եւ դրանք առաջին հերթին պայմանաւորուած են տարիներ շարունակ իրականացուող հակաժողովրդական քաղաքականութեամբ եւ ապաշնորհ կառավարմամբ»,- նշել է Դեմիրճեանը:

Նրա խօսքով, կարեւորագոյն խնդիր է անպատժելիութեան եւ ամենաթողութեան վերացումը: «Ո՞վ է առ այսօր պատասխան տուել 2008թ. Մարտի 1-ի 10 սպանութիւնների համար եւ ով է հաւատում, որ ցանկութեան դէպքում այդ ոճրագործութիւնը հնարաւոր չէ բացայայտել:

Պատասխանատու պաշտօններում շատ դէպքերում նշանակւում կամ վերանշանակւում են արատաւորուած, իրենց գործը ձախողած, յանցագործութիւնների մէջ խրուած անձինք: Կոռուպցիայի դէմ անհաշտ պայքարի մասին յայտարարող վարչախումբը իշխանական լծակները օգտագործում է իր մերձաւորներին եկամտաբեր պաշտօններում տեղաւորելու, նրանց բիզնես շահերը սպասարկելու նպատակով եւ անամօթաբար խօսում արդարութիւնից եւ օրինականութիւնից: Վերահսկիչ պալատի վերջին զեկոյցը եւս մէկ անգամ ցոյց տուեց թէ ինչպէս է թալանւում պետական բիւջէն:: Այս ամէնը խարխլում է մեր պետականութեան հիմքերը, սպաննում է մարդկանց հաւատը պետութեան նկատմամբ եւ նպաստում արտագաղթին»,- ասել է պատգամաւորը:

Նա նկատել է, թէ աւելորդ է խօսել երկրի առաջընթացի մասին, քանի դեռ մեր երկրում իշխանութիւնը չի ձեւաւորւում համաձայն սահմանադրութեան՝ ժողովրդավարական ընտրութիւնների միջոցով: «Ինչ որ արատաւոր աւանդոյթ է ձեւաւորւում՝ ոտնահարելով սահմանադրութիւնը բռնազաւթել իշխանութիւնը եւ յետոյ իրականացնել սահմանադրական փոփոխութիւններ, ընդ որում նոյնպէս կեղծիքներով: Ակնյայտ է, որ անիմաստ է խօսել սահմանադրական փոփոխութիւնների մասին, քանի դեռ չի իրացւում սահմանադրութեան 2-րդ անփոփոխ յօդուածը: Անհրաժեշտ են իրական փոփոխութիւններ եւ ոչ թէ արհեստական օրակարգեր: Հայաստանին առաջին հերթին անհրաժեշտ է ժողովրդի կողմից ընտրուած եւ սահմանադրութիւնը յարգող իշխանութիւն: Սրանից է պէտք սկսել, սա է օրուայ հրամայականը: Արդար ընտրութիւններ եւ ազնիւ իշխանութիւն, ահա թէ ինչ է պէտք մեր երկրին»,- ամփոփել է Դեմիրճեանը:

### «Իշխանութիւնը Սահմանադրական Բարեփոխումներ Անելու Իրաւունք Չունի». «Ժառանգութիւն»

Ոչ լեգիտիմ իշխանութիւնը երբեւիցէ սահմանադրական բարեփոխումներ անցկացնելու որեւէ քաղաքական իրաւունք չունի: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը:

Նա նշեց, որ եթէ իսկապէս այդպիսի լաւ բարեփոխումներ են պատրաստում, ապա թող համաձայնութեան գան մէկ տարուայ ընթացքում նորմալ քննարկումների արդիւնքում կազմել այդ ամէնը, այնուհետեւ անցկացնել համապետական ընտրութիւններ: «Եթէ նախագահական ինստիտուտն էլ վերանայ եւ անցնի պառլամենտական համակարգը եւ ինքը հրաժարական տայ, կը նշանակուեն նոր համապետական ընտրութիւններ, սա կոնկրետ առաջարկ էր, որը մերժուել էր: իշխանութիւնների կողմից: Մենք առաջարկել էինք «Ընտրական օրէնսգրքի» մի շարք դրոյթներ հանել, խօսքը քուէարկած քաղաքացիների ցուցակները հրապարակայնացնելու եւ 100 տոկոս համամասնականին անցնելուն է վերաբերում: Մենք առաջարկում էինք սահմանադրական փոփոխութիւններին ընդառաջ օրէնքներ ընդունել, ընդդիմութեանը վերահսկողական լծակներ տալ, այդ ամէնը չի արուել, էլ ի՞նչ փաստարկ է ուզում: Եթէ այդ առաջարկութիւնները չեն ընդունւում, նշանակում է՝ իշխանութիւնը հետին մտքեր ունի եւ բացարձակապէս դրական բարեփոխումներ կատարելու խօսքերը կապ չունեն իրականութեան հետ»,-ասաց «Ժառանգութեան» փոխնախագահը:

Յիշեցնենք, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը Հանրապետական կուսակցութեան վերջին խորհրդի ժամանակ յայտարարել է, թէ Սահմանադրական փոփոխութիւնների հակառակորդները միայն մի փաստարկ են բերում, թէ հիմա ժամանակը չէ, ինչը ինքը փաստարկ չի համարում եւ կը ցանկանար փաստարկներ լսել:

### ՀԱԿ-ը Պահանջում Է Քննարկել Ժողովրդագրական Խնդիրը

Արտագաղթի խնդիրը միայն իշխանութեան կամ ընդդիմութեան խնդիրը չէ, այդուհանդերձ, խորհրդարանական քառեակի կողմից առաջադրուած հարցը պատասխան չստացաւ: Այդ մասին Խորհրդարանում յայտարարեց ՀԱԿ խմբակցութեան քարտուղար Արամ Մանուկեանը:

Նրա խօսքով՝ Հայաստանում լուրջ ժողովրդագրական գործընթացներ են կատարւում. «Վերջին ամիսներին մենք ուսումնասիրել ենք միջազգային կազմակերպութիւնների՝ վերջին 15 տարիների ընթացքում Հայաստանի ժողովրդագրութեան վերաբերեալ հետազօտութիւնները եւ կը ցանկանայինք, որ այդ հետազօտութիւնները հասանելի լինեն պատգամաւորներին: Ազգային ժողովը պէտք է իմանայ երկրի ժողովրդագրական իրավիճակի մասին եւ քննարկի այդ խնդիրը»:

Դիմելով խորհրդարանի նախագահ Գալուստ Սահակեանին՝ Մանուկեանը խնդրեց վերջինիս երկրի ժողովրդագրական իրավիճակի քննարկման համար ձեւաչափ ընտրել. «Ձեւաչափն ընտրէք ինքներդ: Կարեւորն այն է, որ այդ հարցը խորհրդարանում քննարկուի»:

### «Քոչարեանը Վազգէնի Անունը Տալու Բարոյական Իրաւունք Չունի». Ա. Սարգսեան

«Հրապարակը» զրուցել է «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ, ՀՀ նախկին վարչապետ Արամ Սարգսեանի հետ: Հատուած հարցազրոյցից.

-Դուք ասում էք՝ Վազգէն Սարգսեանը հիմա էլ ներկայ է, եւ նրան յիշատակում են անընդհատ: Վերջերս էլ Քոչարեանի 60- ամեակին նուիրուած ֆիլմում կա կտոր, որտեղ Վազգէնը գովաբանում է Քոչարեանին:

-Նախ, դա միանշանակ հիմնաւորում է, որ Վազգէն Սարգսեանը կայ եւ շատ աւելի մեծ գործօն է, քան ֆիզիկապէս կենդանի Ռոբերտ Քոչարեանի քաղաքական գործօնը: Երկրորդ՝ եթէ Ռոբերտ Քոչարեանը յարգում է Վազգէն Սարգսեանի յիշատակը, նրան իր եղբայրն է համարում եւ այս մասին բարձրաձայնել էր, նա կարող էր դա ցոյց տալ, երբ Վազգէն Սարգսեանի մայրը նստած էր իր դռան առաջ: Ճիշդ էր թէ սխալ՝ այլ խնդիր է: Բայց նա իր մեծամտութեան եւ գոռոզութեան աստիճանից չիջաւ ներքեւ: Ես լաւ յիշում եմ, թէ ինչպէս 99 թուականի Հոկտեմբերի 30-ին Ռոբերդ Քոչարեանը մեր բակում, իմ, Գագիկ Յարութիւնեանի, Հրայր Յովնանեանի, Սերժ Սարգսեանի ներկայութեամբ, երբ ոչ ոք ոչինչ չէր խօսում, յայտարարեց, որ Հոկտեմբերի 27-ի ոճրագործութիւնն այն 5 մարդկանց ձեռքի գործն է, ուրիշ ոչ ոք չկայ: Իրեն հակադարձեցին թէ՛ Հրայր Յովնանեանը, թէ՛ Գագիկ Յարութիւնեանը, որ դա այդպէս չի: Բայց ինքն ամբողջ դատական պրոցէսը տարաւ այն ուղղութեամբ, որ հիմնաւորուի դա: Այս առումով նա Վազգէն Սարգսեանի անունը տալու բարոյական իրաւունք չունի: Երբ ինքը 130 վկաներից հարցաքննում է միայն 60-ին, երբ հանդիպում է ահաբեկչի հետ, որպէս երկրի նախագահ, եւ դաշտում չկայ այդ հանդիպման ձայնագրութիւնը, երբ ինքն ամէն վայրկեան վերահսկում էր դատավարութեան գործընթացը, ամէն օրուայ փաստաթղթերն ուղղակի իր հսկողութեան տակ էին, որն իր ֆունկցիայից դուրս էր, եւ այդ ամէնն անում էր, որ հիմնաւորուի, թէ այս 5-ն են եղել: Ուրիշ ոչ ոք չկայ: Սրա վրայ է, որ այս հասարակութիւնը կասկածում է իրեն ու իրենց, էդ շրջապատին, եւ այս կոնտեքստում նա Վազգէն Սարգսեանի պատկերը տեսնելուց, անունը լսելուց պէտք է գլուխը կախի, ոչ աւելի: Եթէ զէնքի հետ կապուած մէջբերումներ չանեմ»:

## ԼՈՒՐԵՐ

# Հանդիպել են Լեւոն Տէր-Պետրոսեանը եւ Գագիկ Ծառուկեանը



*ՀԱԿ-ԲՀԿ հանդիպումը երկու կուսակցութիւններու ղեկավարներու մասնակցութեամբ*

*Սեպտեմբերի 9-ին տեղի է ունեցել ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկեանի հանդիպումը, որին մասնակցել են «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնից՝ Վարդան Օսկանեանը, Նաիրա Զոհրաբեանը եւ Ստեփան Մարգարեանը, «Հայ Ազգային Կոնգրէս» կուսակցութիւնից՝ Լեւոն Զուրաբեանը, Արամ Մանուկեանը եւ Աւետիս Աւագեանը:*

*Ինչպէս նշուած է երկու կուսակցութիւնների տարածած համատեղ մամուլի հաղորդագրութեան մէջ, հանդիպման ընթացքում քննարկուել են Քառեակի համագործակցութեան արդիւնքները, համատեղ հանրահաւաքի կազմակերպման եւ նախապատրաստման հետ կապուած հարցեր:*

*«Երկու քաղաքական ուժերը վերահաստատել են ներկայ իրավիճակում առաջարկուող սահմանադրական փոփոխութիւնների ճանապարհով երկրի կառավարման համակարգի փոփոխութեան անընդունելիութեան մասին իրենց դիրքորոշումները եւ առաջնային են համարել երկիրը զարգացման ուղու վրայ դնելուն ուղղուած բարեփոխումների իրականացումը», . նշւում է հաղորդագրութեան մէջ:*

*Կողմերը նաեւ կարեւորել են մինչեւ հանրահաւաքը քառեակի շրջանակներում համատեղ այցելութիւնները մարզեր՝ ընդհանուր օրակարգի հարցերի շուրջ ժողովրդին իրազեկելու եւ համախմբելու նպատակով:*

*Նշենք, որ սահմանադրական փոփոխութիւնների ծրագիրը նախաձեռնել է գործող իշխանութիւնը՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ: Փոփոխութիւնները նախատեսում են նուազեցնել նախագահի դերը՝ մեծացնելով խորհրդարանինը:*

# Խոչընդոտներ Ղարաբաղեան Հարցի Կարգաւորման Ճանապարհին

*«NEWS.am»-ը զգալի կրճատումներով ներկայացնում է «Հայաստանի Եւրոպացի Բարեկամներ» կազմակերպութեան տնօրէն Էդուարդօ Լօրէնցոյի յօդուածը, որը հրապարակուել է «New Eastern Europe» ամսագրում:*

*Վերջին ժամանակներում անընդհատ քննադատութիւն է հնչում ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքի վերաբերեալ, որը վերջին 20 տարում ձգտում է ղարաբաղեան հակամարտութեան բոլոր կողմերի համար ընդունելի որոշում գտնել: Նուազագոյն դէպքում կասկածներ են հնչում նաեւ Եւրոպական Միութեան վերաբերեալ: Ճշմարիտ է, որ հակամարտութեան բաւարարող լուծում դեռ չի յայտնաբերուել, սակայն ճիշդ է նաեւ այն, որ յաջողուել է խուսափել նոր լայնածաւալ պատերազմից՝ դրամատիկ հետեւանքներով ոչ միայն Հարաւային կովկասի, այլ նաեւ ամբողջ աշխարհի համար, յատկապէս նաւթից կախուած տնտեսութիւնների համար:*

*1994թ.-ից ԵԱՀԿ Մինսկի խումբը առաջ քաշեց տարբեր շրջանակներում հինգ առաջարկութիւններ երկու կողմերին՝ վերջնական կարգաւորման հասնելու համար: Դրանցից չորսը մերժուեցին, բայց մէկը մնաց սեղանի վրայ: Ակնյայտ է, որ այն սկսւում է հիմունքներից եւ վերաբերում է երկու կողմերի միջեւ վստահութեան այնպիսի մակարդակի ստեղծմանը, որն անհամատեղելի է Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի շփման գծում անընդհատ կրակոցների հետ՝ յանգեցնելով անիմաստ զոհերի:*

*ԵԱՀԿ Մինսկի խումբն աշխատում է նաեւ այդ ուղղութեամբ: 2012 թ.-ի Յունիսին համանախագահները երկու տրամաբանական նոր առաջարկներ ներկայացրին, որպէսզի աշխարհում միակ ինքնակարգաւորուող հրադադարի ռեժիմում խուսափեն զոհերից: Առաջինը հրադադարի ռեժիմի խախտումների հետաքննութեան մեխանիզմի ստեղծումն էր: Երկրորդն առաջարկում էր դուրս բերել բոլոր դիպուկահարներին շփման գծից: Ի զարմանս շատերի՝ երկու առաջարկութիւններն էլ մերժուեցին Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի կողմից:*

*Նման մօտեցումն աւելի յստակ է դառնում, երբ վերլուծում են ռազմական գործողութիւնների բնոյթը, որոնք հարաւկովկասեան այս երկիրը վերջերս իրականացնում է Լեռնային Ղարաբաղի դէմ: Աւելի յաճախ են ադրբեջանական հետախուզական եւ դիվերսիոն խմբերի զինուորները հրաման ստանում ներթափանցելել Լեռնային Ղարաբաղի եւ անգամ Հայաստանի Հանրապետութեան տարածք, թէեւ նրանց հրամանատարութիւնը շատ լաւ գիտակցում է, որ այս ուղին անդառնալի է: Ակնյայտ է, որ այս պայմաններում ԵԱՀԿ Մինսկի խմբի կամ որեւէ այլ կազմակերպութեան համար չափազանց դժուար է միջնորդական ջանքեր գործադրել, եւ չափազանց բարդ է առաջընթացի հասնել:*

*Միեւնոյն ժամանակ ԵՄ-ն վերջին տարիներին փորձում է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական ջանքերին աջակցելու համար: Նախ, ԵՄ-ն սկսել է Հարաւային Կովկասի երկրներում ժողովրդավարութիւնն ամրապնդելու ծրագիր, ինչպէս եւ Արեւելեան գործընկերութեան երկրներում եւ այլ հարեւան երկրներում: Հայաստանում եւ Վրաստանում առաջընթաց գրանցուեց, սակայն ԵՄ կողմից հրապարակուած ամենամեայ զեկոյցի համաձայն՝ պատկերն Ադրբեջանում աւելի ու աւելի մռայլ է դառնում:*

# Պատարագ Աղթամարում. եկեղեցում մեծ մասամբ քրդեր եւ թուրքեր էին



*Վանի Աղթամար կղզւի վրայ գտնուող Ս. Խաչ եկեղեցւոյ պատարագի ներկաները*

*Հարիւրաւոր հայեր աշխարհի տարբեր ծայրերից Սեպտեմբերի 7-ին, հաւաքուել էին Վանի Աղթամար կղզում՝ ներկայ գտնուելու սուրբ պատարագի:*

*NEWS.am-ի թղթակիցը Վանից հաղորդում է, որ պատարագին ներկայ էր Պոլսոյ հայոց պատրիարքական փոխանորդ, արք. Արամ Աթէշեանը, Յունաց պատրիարք Բարդուղիմէոսը, ասորական ուղղափառ եկեղեցու պատրիարքական փոխանորդը եւ բարձրաստիճան այլ հոգեւորականներ, ինչպէս նաեւ Վանի իշխանութիւնների ներկայացուցիչներ: Պատարագից անմիջապէս յետոյ ներկաներին իր ողջոյնի խօսքը յղեց Պոլսոյ հայոց պատրիարքական փոխանորդը, որից յետոյ արդէն ներկայ հաղորդութիւն ստացան:*

*Հետաքրքրական է, որ այս տարի պատարագին մեծամասամբ թուրքեր եւ քրդեր էին ներկայ: Հէնց նրանց էլ յատուկ տեղեր էին յատկացուել եկեղեցում: NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում բակում հաւաքուած հայերը բողոքում էին, որ մուտքի մօտ կանգնած անվտանգութեան աշխատակիցներն ու հոգեւոր այրերի թիկնապահներն իրենց թոյլ են տուել մտնել մի քանի րոպէով, իսկ արդէն հաղորդութեան ժամանակ առհասարակ ոչ մէկի չեն թոյլատրուել մուտք գործել եկեղեցի:*

*Հաղորդութիւնից յետոյ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանը ողջունեց դրսում հաւաքուած հաւատացեալներին, աղօթեց եւ անմիջապէս հեռացաւ:*

*Այնուամենայնիւ, Ռուսաստանից, ԱՄՆ-ից եւ Եւրոպայից ժամանած հայերը ոգեւորուած էին. մեզ հետ զրոյցում նրանք շեշտում էին, որ իրենց համար ամենակարեւորն իրենց ծնողների ծննդավայր այցելելն է: Պատարագին մասնակցում էին նաեւ մեծ թիւով օտարերկրացիներ: Ի դէպ, նրանց մի մասը Վան էր ժամանել Երեւանից, որտեղ գիտաժողովի համար էին եկել:*

*Նշենք, որ Թուրքիայի կառավարութեան միջոցներով Աղթամարի Սուրբ Խաչը 2007-ին վերանորոգուել է եւ բացուել է այցելութիւնների համար որպէս թանգարան: Այնուհետ Պոլսոյ Հայոց պատրիարքարանը դիմել էր Թուրքիայի կառավարութեանը՝ Աղթամարի Սուրբ Խաչում տարին մէկ անգամ պատարագ իրականացնելու թոյլտուութիւն ստանալու համար: 2010-ի Մարտին Թուրքիայի մշակոյթի նախարար Էրթուղրուլ Գիւնայը յայտարարեց, թէ արդէն կայ Սուրբ Խաչում պատարագ իրականացնելու եւ եկեղեցու գմբէթին խաչ տեղադրելու թոյլտուութիւնը: Պատարագի անցկացման օր նշանակուեց Սեպտեմբերի երկրորդ կիրակի:*

*Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին 915-921 թուականներին կառուցուել է Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունու պատուերով՝ ճարտարապետ, քանդակագործ եւ նկարիչ Մանուէլի կողմից: Տաճարի արտաքին պատերը զարդարուած են 6 հորիզոնական շարք կազմող զարդաքանդակներով, որոնք չեն խախտում պատերի հարթութիւնը: Զարդաքանդակները ստեղծելիս Մանուէլը հաշուի է առել հնարաւոր դիտանկիւնները եւ տարբեր ժամերի լուսաւորութիւնը: Պատերից մէկի վրայ Գագիկ Արծրունու դիմաքանդակն է, կողքին՝ ողջ հասակով Քրիստոսը, որին արքան պարգւում է եկեղեցու մանրակերտը:*

# ԱՄՆ կ'ողջունէ

*Շարունակուած էջ 1-էն*

*Այս պահուն ԵԱՀԿ Մինսկի համանախագահները շատ նոր բաներ չեն պատրաստեր: Ուրուագիծը արդէն պարզ է ու յստակ, այժմ խնդիրը այն է, որպէսզի երկու ղեկավարները համաձայնին, պէտք է նստիլ նոյն սեղանի շուրջ եւ առաջընթաց արձանագրեն հակամարտութիւնը քայլ առ քայլ լուծելու ուղղութեամբ», - ըսած է Հեֆերն՝ աւելցնելով. - «Ձեմ կարծեր, որ առաջարկներ կը ներկայացուին: Նպատակը այն է, որ կողմերը հանդիպին եւ համակարգուած ձեւով փորձեն ճանապարհ գտնել հակամարտութեան լուծման համար»:*

# ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

## ԵԳԻՊՏՈՍ

### ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՄՈՐՍԻ ԼՐՏԵՍՈՒԹԵԱՄԲ Կ'ԱՄԲԱՍՏԱՆՈՒԻ

*ԳԱՀԻՐԷ. Եգիպտոսի հանրապետութեան նախկին նախագահ Մոհամմէտ Մորսի որ ներկայիս կալանաւոր վիճակի մէջ կը գտնուի, իշխանութիւններու կողմէ պիտի դատուի որպէս լրտես: Երկրի ընդհանուր դատախազի յայտարարութեամբ Մորսին Եգիպտոսի մեծագոյն լրտեսը կը համարուի: Ան ծոցի երկիրներէն Քաթարի կառավարութեան փոխանցած է իր երկրի պետական պաշտօնական գաղտնիքները:*

*Մորսիի դէմ եղած ամբաստանութիւնները լրտեսական մակարդակին բարձրացնելով՝ կրկնակիօրէն կը հարուածուի թէ Քաթարը եւ թէ Իսլամ եղբայրակցութիւնը: Արդարեւ, անոնք պատճառ հանդիսացան նաեւ ելեկտրական հոսանքի զանգուածային ընդհատումին:*

*Մորսիի հետ միաժամանակ կ՚ամբաստանուին 8 այլ անձեր եւս, որոնք Եգիպտոսի ազգային անվտանգութիւնը խախտած են, գանձելով մէկ միլիոն տոլար: Այդ տեղեկատուութիւնները փոխանցուած են Քաթարի սեփականութիւնը եղող «Ալ Ճազիրա» հեռուստակայանի միջոցով: Տեղեկութիւնները կ՚ընդգրկեն որոշ նկարագրութիւններ Եգիպտական բանակի «անոր դիրքաւորումներուն եւ զէնքերու տեսակներու մասին»:*

*Նշենք նաեւ որ Եգիպտոս անցեալ տարուան ընթացքին իսկ դիրքաւորուած էր «Ալ Ճազիրա» կայանին դէմ եւ ձերբակալած էր երեք լրագրողներ, որոնք դատապարտուած էին եօթ տարի բանտարկութեան:*

## ՍՈՒՐԻԱ

### ՄԱԿ-Ի ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՄԱՐՄԻՆԸ ՆԱԽԱՊԱՏՒՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՅ ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԻՐԱՔԻ

*ԺԸՆԵՒ. ՄԱԿ-ի Մարդկային Իրաւանց Մարմինը ընտրեց իր նոր նախագահը՝ յորդանանցի իշխան Զէյտ Էլ Հիւսէյնը: Ան ՄԱԿ-ի մարդկային իրաւանց 27րդ խորհրդաժողովին ելոյթ ունեցաւ Ժընեւի մէջ եւ ըսաւ թէ ստիպողական արագ լուծում մը պէտք է տրուի Իրաքի եւ Սուրիոյ սահմանաեզրին տիրող հակամարտութեանց:*

*Իշխան Զէյտ Արաբական եւ Իսլամական աշխարհէն նշանակուած առաջին պաշտօնակատարն է, որպէս ղեկավար ՄԱԿ-ի մարդկային Իրաւունքներու Խորհուրդին որուն մաս կը կազմեն 47 երկիրներ: Ան միաժամանակ դատապարտեց իսլամ ծայրայեղականները, որոնք ընդարձակ հողատարածք մը գրաւելով կը ձգտին իսլամական խալիֆայական պետութիւն մը հաստատել եւ ընկճել էթնիք փոքրամասնութիւնները իրենց վայրագ արարքներով:*

## ԼԻԲԱՆԱՆ

### ԱՊԱՍՏԱՆԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԷԿ ԵՐՐՈՐԴԸ ԳՈՐԾԱԶՈՒՐԿ Է

*Ներկայիս Լիբանան ապաստանած սուրիացի գաղթականներուն համար աշխատանքի արտօնագրի խիստ պայմաններ ստեղծուած են: Միջնակարգ ուսում ստացած սուրիացի երիտասարդ մը մեծ դժուարութիւն ունի իր ապրուստը հոգալու: Անցեալ տարի միայն 650 սուրիացիներ աշխատանքի արտօնագիր ստացած են: Գաղթականներուն երեքէն մէկը միայն գործ գտած է եւ այդ ալ՝ ոչ բնական վճարումներով: Օրական 5-8000 սուրիացիներ կը վերադառնան տուն: Սակայն նոյնքան մըն ալ կը գաղթեն դէպի Լիբանան...:*

*Միւս կողմէ Լիբանանեան զանազան շրջաններու մէջ կը շարունակուին սուրիացի գաղթականներուն դէմ արձակուած սպառնալիքներու արշաւը: Սայտայի մօտակայ Պէյսարիյէ շրջանին մէջ տարածուեցան ժողովրդային Ցանձնախումբեր ստորագրութեամբ բացիկներ, որոնց մէջ սուրիացի գաղթականներէն կը պահանջուի մէկ շաբթուան ընթացքին դատարկել շրջանը, առ ի հակադարձութիւն լիբանանեան բանակի զինուորներուն սպանութեան: Իսկ Ֆըռն Շըպպէքի Երիտասարդներ ստորագրութեամբ բացիկներ սուրիացիներուն կոչ ուղղեցին գիշերուայ ժամը 8-էն ետք չշրջագայիլ փողոցներուն մէջ:*

## ԼԻՊԻԱ

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԸ ՍԵՄԻՆ

*Երկրէն ներս կը տիրէ կատարեալ անիշխանական վիճակ, զինեալներու եւ քաղաքական տարբեր հոսանքներու միջեւ: Բոլոր կողմերը ձգտում են տիրանալ իշխանութեան: Քաղաքական մեկնաբաններու կարծիքով իրերու այս ընթացքը՝ կրնայ երկիրը տանիլ դէպի քաղաքացիական պատերազմ: Ներկայիս, պառակտումի եզրին հասած Լիպիան, արդէն ունի երկու խորհրդարան եւ երկու պետութիւն: Ցատկանշական երեւոյթներէն մին այն է որ ծայրայեղ իսլամիստները չարաչար պարտուած են խորհրդարանական վերջին ընտրութեանց ընթացքին:*

---

# ՕԳՆԷ՛ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ՕՂԱԿԸ ԿՏՐԵԼՈՒ

## (HELP BREAK THE CYCLE OF POVERTY)

*ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ*

*Հայաստանի Համահայկական Հիմնադրամը (Armenia Fund) եղած է ու կը մնայ (հայրենի ազգային բանակին հետ միասին) մեր գովելի պետական կառոյցներէն մէկը որ մեզի մոռցնել կու տայ երրորդ աշխարհի խղճալի իշխանաձեւային աշխատանքի կիրարկումը հայրենիքի մէջ, որու պատճառաւ, դժբախտաբար, ազգային հարստութիւնը ժողովուրդին չծառայեր:*

*Կիրակի օր, Սեպտեմբեր 7-ին, հինգ ժամուայ մէջ ( երեկոյեան ժամը 5-10 pm pacific time կամ 8:00 pm-1:00 am Atlantic time) Ամերիկայի Գալիֆորնիա նահանգի Հիմնադրամի մասնաճիւղը ձեռնարկած է դրամահաւաքի արշաւի մը (Telethon) "Օգնէ՛ ՝ Աղքատութեան Օղակը Կտրելու" (Help Break the Cycle of Poverty) անուան տակ, որ պիտի սփռուի Լոս Անճըլըսի ARTN/SHANT TV հեռատեսիլի կայանէն, օգնութեան ձեռք երկարելու համար քսան (20) աղքատ ու չքաւոր հայ ընտանիքներու՝ որոնք կ՛ապրին Կիւմրի քաղաքի հիւղաւաններէն մէկուն մէջ, եւ որոնք 1988-ի երկրաշարժին հետեւանքով տակաւին կը շարունակեն ապրիլ "ՏՈՄԻԿ" կոչուող երկաթէ շինուած տուփ-խրճիթներու մէջ, եւ որոնք վիճակուած էին ըլլալու ժամանակաւոր եւ ոչ մնայուն:*

*Հիմնադրամի կողմէ ստացուած ե-նամակին մէջ կ՛ըսուի հետեւեալը:*

*«Հակառակ ահագին, եւ մասամբ յաջող, փորձերուն բնակարաններ տալու անոնց որոնք կ՛ապրին հիւղաւաններու մէջ, շատ մը ընտանիքներ, տարբեր պատճառներով, կը մնան առանց բնակարանի»: եւ, ե-նամակը վերի ըսուածէն քիչ մը վար կը շարունակէ ըսել:*

*«Կառավարութիւնը արդէն շինեց եւ տրամադրեց բնակարաններ հազարաւոր մարդոց, բայց այս մարդիկը, զանազան պատճառներով, ընտանիքներ են որ դեռ չեն փոխադրուած նոր տուներ, ու թէեւ բոլոր այդպիսիներուն հարցերը պիտի լուծուին մինչեւ 2018 թուականը, այդ ընտանիքներէն ոմանք չեն կրնար սպասել, եւ այդ պատճառաւ Հիմնադրամը ներկայ դրամահաւաքի քայլին դիմեց»:*

*Կասկածէ վեր է թէ ամէն հայու ներաշխարհը ի նպաստ աղէտեալներուն օգտակար ըլլալու տրամադրութիւններով լեցուած էր 1988-ի երկրաշարժէն ետք, եւ վստահաբար այդ տեսակի տրամադրութիւնները տակաւին կը շարունակուին մեր մէջ օգնելու համար մեր անբախտ հայրենի եղբայրներուն ու քոյրերուն, որոնք տակաւին կը կրեն հետեւանքները այդ աւերիչ երկրաշարժին: Ուստի, յոյսով ենք որ Սեպտեմբեր եօթին կայանալիք թէլէթոնը յաջող արդիւնք կու տայ եւ այդ Կիւմրիցի քսան ընտանիքները "տոմիկ"ներէն կը փոխադրուին իրենց բնակարանները սփիւռքահայութեան կողմէ տրուած նպաստով:*

*Հոս սակայն, Հիմնադրամի ե-նամակին մէջ մեր ուշադրութիւնը կը գրաւէ քանի մը բառեր, ինչպէս՝ «ահագին, եւ մասամբ յաջող փորձերուն» եւ «տարբեր պատճառներով» կամ «զանազան պատճառներով» այդ խեղճ մարդիկը կը մնան առանց բնակարանի կամ դեռ չեն փոխադրուած նոր տուներ:*

*Երկրաշարժէն քառորդ դար կամ քսանհինգ տարիներ ետք, մարդ իրաւունք ունի հարց տալու թէ արդեօք ի՞նչ տեսակի պատճառներ են այդ տարբեր եւ զանազան նկատուող պատճառները որ տակաւին առանց բնակարանի թողած են մեր ազգակից աղէտեալները:*

*Հաճոյքով կը դիտեն ոմանք հայրենիքի մէջ վերջին քառորդ դարու մէջ բազմամիլիոն ծախսերով շինուած ու բարձրացած Եկեղեցիներն ու դպրեվանքներն ու փարթամ դղեակները եւ քիչ մը ամէն տեղ ու կողմ արդիականացած Երեւանեան կեանքի շռայլութիւնը. եւ ոմանք ալ զարմանքի աչքերով կը դիտեն անբախտ աղէտեալներուն եւ գիւղացիներուն «զանազան եւ տարբեր» պատճառներով լքուած ըլլալու խեղճուկրակ վիճակը:*

*Այդ զանազան եւ տարբեր նկատուող «արդարացուցիչ» պատճառները արդեօք հետեւանքն են աղէտեալներու անճարակութեա՞ն եւ անկարգութեա՞ն, կամ հետեւանքն են պատասխանատուներու անհոգութեան, անկարողութեան եւ կամ անփութութեան:*

*Ինչ որ ալ ըլլայ պատճառը, սպասելի եւ փափաքելի է որ նուիրահաւաքի թէլէթոնը յաջողի եւ Կիւմրիցի այդ անպատսպար մեր ժողովուրդի աղէտեալները Հիմնադրամի օգուտը տեսնեն ու նոր բնակարաններ փոխադրուելով սփիւռքահայութեան կենացը խմեն:*

---

# «Մենք Սկսում Ենք Քաղաքական Նոր Սեզոն»

*Շարունակուած էջ 1-էն*

*ներին էլ բաւականաչափ ակտիւ աշխատանք է իրականացուել, օրէնքների նախագծեր են մշակուել, միջազգային համագործակցութեան խորացման ուղղութեամբ են աշխատանքներ կատարուել, յատկապէս մեծ աշխատանք է իրականացուել կուսակցական տեղական կառոյցների հետ ուղիղ եւ յետադարձ կապի ամրապնդման ուղղութեամբ: Ինձ դուր է գալիս այն ակտիւութիւնը, որով դուք աշխատում էք Լեռնային Ղարաբաղի եւ Նրա ղեկավարութեան հետ: Պէտք է ասեմ, որ շատ բարձր եմ գնահատում բոլոր պատգամաւորների եւ բնական է, առաջին հերթին մեր պատգամաւորների ակտիւութիւնը Յուլիսի վերջին, Օգոստոսի սկզբին, երբ մեր սահմաններում լարուածութիւն կար եւ երբ ձեզնից շատ-շատերը գնացին առաջին գիծ, գնացին սատարելու մեր զինուորներին, եւ մենք բոլորս միասին ունեցանք յաջողուած, եթէ կարելի է այսպէս ասել՝ այդ փուլի աւարտ», նման ձեւով գնահատած է Սարգսեան Հանրապետական պատգամաւորներուն, որոնք հագուադէպ կը մասնակցին Խորհրդարանի նիստերուն:*

*Կառավարութեան մասով Սարգսեան ըսած է, որ կառավարութիւնը որդեգրած է բաւականին ակտիւ գործելակերպ: «Աշխատում է բաց, հրապարակային եւ արձագանքում է բոլոր հրատապ խնդիրներին: Մեր խորհրդի, խորհրդարանական մեր խմբակցութեան իւրաքանչիւր անդամ պէտք է ամէն օր աշխատանքի գայ այն մտադրութեամբ, ո՛ր պէտք է, անպայման, օգնի կառավարութեանը, ո՛ր իր հնարաւորութիւնների սահմաններում պարտաւոր է օժանդակել կառավարութեան գործունէութեանը, նպաստել որեւէ ծրագրի իրականացմանը, հանդէս գայ որեւէ նոր լաւ նախաձեռնութեամբ: Հակառակ պարագայում, մենք լաւ արդիւնքներ ունենալ չենք կարող: Եւ ինչպէս պայմանաւորուել ենք, պարո՛ն վարչապետ, կառավարութիւնն էլ իր հերթին շատ ուշադիր պէտք է լինի մեր պատգամաւորների, խորհրդի անդամների առաջարկութիւնների նկատմամբ: Մենք պէտք է աշխատենք միասին, որովհետեւ այլ ճանապարհ չկայ», ըսած է Նախագահ Սերժ Սարգսեան:*

# ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ
# ԻՐԱՔՆ ՈՒ ՍԻՐԻԱՆ ՀԵՏԵՒՈՒՄ ԵՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՕՐԻՆԱԿԻՆ

**ՋՈՐՋ ՖՐԻԴՄԱՆ**

Լիբանանն ստեղծուեց Սայքս-Պիկոյի համաձայնագրի հետեւանքում: Բրիտանիայի եւ Ֆրանսիայի միջեւ կնքուած համաձայնագիրը վերաձեւաւորեց փլուզուած Օսմանեան կայսրութեան մաս կազմող Հարաւային Թուրքիայի յատկապէս արաբական տիրոյթները եւ առաջ բերեց պետութիւններ, որոնց մենք այսօր անուանում ենք Լիբանան, Սիրիա եւ Իրաք, որոշ առումով նաեւ Արաբական Թերակղզի: Մօտ հարիւր տարի գործելուց յետոյ այդ ազգային պետութիւններն (nation-states) այժմ մահացած են, եւ այն, ինչ կատարւում է Սիրիայում եւ Իրաքում կարելի է որակել հետ բրիտանա-ֆրանսական «քարտէզագրութեան» նոր իրավիճակ, որը գալու է փոխարինելու այն «քարտէզագրութեանը», որը Մ. Նահանգները փորձում է պահպանել բրիտանա-ֆրանսական տիրապետութեան անկումից յետոյ:

Ֆրանսացի դիւանագէտ Ֆրանսուա Ժորժ Պիկոյի եւ բրիտանացի դիւանագէտ Սըր Մարկ Սայքսի անունը կրող համաձայնագիրը երկու բան արեց: Նախ ստեղծեց Իրաքը՝ Անգլիայի տիրապետութեան տակ եւ ապա բաժանեց Սիրիայի Օսմանեան նահանգը երկու մասի՝ Հիւսիսային մասը դարձաւ Ֆրանսայի ազդեցութեան ոլորտ, իսկ հարաւային մասը՝ Անգլիայի: Ֆրանսիացիները, որոնք 19-րդ դարից սկսած Լեւանտի կազմում էին, դաշնակիցներ ունէին տարածաշրջանի քրիստոնեաների շարքերում, ուստի կարողացան Սիրիայի մի մասից իրենց համար երկիր ստեղծել եւ մօտակայ լեռան անունով կոչել այն Լիբանան:

Յորդանան գետից արեւմուտք գտնուող տարածքը բրիտանացիները անուանեցին Պաղեստին՝ Օսմանեան վարչական շրջան Ֆիլիստինայի տարբերակով: Բայց նրանք մի խնդիր ունէին: Առաջին համաշխարհայինի ժամանակ, մինչ կռւում էին օսմանեան Թուրքերի դէմ, նրանք բարեկամացել էին արաբական մի քանի ցեղերի հետ, որոնք փորձում էին ազատուել Թուրքերից: Երկու իրար թշնամի ցեղեր դարձան բրիտանացիների գլխաւոր դաշնակիցները: Նրանց բրիտանացիները յետ պատերազմեան իշխանութիւն էին խոստացել: Յաղթանակած սաուդցիներին նրանք նուիրեցին Արաբիան (այսօրուայ Սաուդեան Արաբիան), իսկ հաշեմականներին՝ Յորդանան գետից արեւելք գտնուող տարածքը, որ անուանեցին Անդրյորդանան, այսինքն Յորդանանից այն կողմ: Ժամանակի ընթացքում «անդր» նախածանցը դուրս թողնուեց, եւ երկիրը կոչուեց պարզապէս Յորդանան (Jordan)

Այսպիսով հինգ տիրոյթներ ստեղծուեցին Միջերկրականի եւ Տիգրիսի միջեւ, կամ Թուրքիայի եւ Սաուդեան Արաբիայի միջեւ: Յետագայում այդ հինգը դարձաւ վեց, երբ 1947-ին ՄԱԿ-ը քուէարկեց յօգուտ Իսրայէլի պետութիւն գոյառմանը: Սայքս-Պիկոյի համաձայնագիրը համապատասխանում էր եւրոպական ձեւաչափերին եւ եւրոպացիներին հնարաւորութիւն էր տալիս ղեկավարելու այդ տարածաշրջանը եւրոպական վարչական սկզբունքներին համաձայն: Ամենակարեւոր շահութաբեր գործօնը՝ նաւթը, Իրաքում եւ Արաբական Թերակղզում, պաշտպանուած էր Թուրքիայում եւ Պարսկաստանում տեղի ունեցող խորը սոցիալական փոփոխութիւններից: Դա այն էր, ինչ եւրոպացիները ցանկանում էին:

Սակայն եւրոպացիները չկարողացան ստեղծել մի համախմբող կառոյց, որն արաբների համար շատ կարեւոր էր: Արաբների համար ընտանիքը, ոչ թէ անհատը, հասարակութեան հիմնական միաւորն է: Անհատական իրաւունքների եւրոպական ձեւաչափը բոլորովին չէր համապատասխանում արաբների մշակութային ձեւաչափին: Նրանց համար ընտանիքը կլաններին էր պատկանում, կլաններն էլ՝ ցեղախմբերին, ոչ թէ ազգութիւններին: Եւրոպացիները օգտագործեցին «ազգային պետութիւն» հասկացութիւնը բացատրելու համար տարբերութիւնը «մենք»ի եւ «նրանք»ի միջեւ: Սա խորթ էր արաբների համար, եւ մինչեւ օրս նրանք չեն կարողանում ընտելանալ այդ հասկացութեան հետ:

Պետութիւնները, որ եւրոպացիները ստեղծեցին, հիմնուած էին կամայական սկզբունքի վրայ: Բնակիչները չէին մասնակցել դրանց: Ոչ էլ իրենց հաւատարմութիւնն էին խոստացել: Դրա համար էլ լարուածութիւններն անպակաս էին (եւ են) հարեւան պետութիւնների միջեւ: Բրիտանացիներն ու ֆրանսացիները իրենց իշխանութիւնը պարտադրել էին արաբներին նախքան Երկրորդ համաշխարհային պատերազմը: Պատերազմից յետոյ մի շարք յեղաշրջումներ «գահընկեց» արեցին նրանց: Սիրիան եւ Իրաքը դարձան խորհրդամէտ պետութիւններ, մինչդեռ Իսրայէլը, Յորդանանը եւ Արաբիան՝ ամերիկամէտ: Միապետներն ու բռնապետները իշխեցին արաբական երկրների մեծամասնութեան վրայ: Այդ ամբողջատիրական վարչաձեւերն էլ կարողացան երկրները միասնական պահել:

### ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ԸՆԴԴԷՄ ՔԱՐՏԷԶԱԳՐՈՒԹԵԱՆ

Առաջինը Լիբանանը մասնատուեց. Լիբանանը, ինչպէս նշեցինք, զուտ «հնարուի» տարածք էր, Սիրիայից վերցուած: Այնքան ժամանակ, որ քրիստոնեաները (որոնց համար Փարիզը ստեղծել էր Լիբանանը) գերակշռող մասն էին կազմում բնակչութեան, ստեղծուած «կառոյցն» աշխատում էր, չնայած քրիստոնեաներն էլ իրենց հերթին այնքան էլ համերաշխ չէին, եւ բաժանուած էին թշնամական խմբաւորումների:

Բայց Երկրորդ աշխարհամարտից յետոյ ժողվրդագրական տուեալները փոխուեցին, եւ շիա դաւանողների թիւն աւելացաւ: Դրան գումարուեց 1948-ին պաղեստինցիների տեղաշարժը (փախուստը) դէպի Լիբանան: Երկիրը մրցակից կլանների տարածք դարձաւ: Տարբեր կրօնական դաւանանքի կլանները ոչ միայն իրար դէմ էին կռւում, այլեւ միեւնոյն խմբաւորման անդամներն էին միմեանց դէմ ըմբոստանում:

Բայց Լիբանանի խնդիրները միայն Լիբանանին չէին պատկանում: Լիբանանը Սիրիայից բաժանող սահմանը ֆրանսացիներն էին գծել: Սիրիան եւ Լիբանանը մէկ երկիր չէին, բայց նորաստեղծ Լիբանանն էլ մէկ երկիր չէր: 1976-ին Սիրիան, կամ աւելի ճիշտ Դամասկոսի ալեւիների բռնապետութիւնը, գրաւեց Լիբանանը՝ նպատակ ունենալով ջախջախել պաղեստինցիներին: Նրանց գլխաւոր դաշնակիցը քրիստոնեայ մի խմբաւորում էր: Սիրիական ներխուժումը քաղաքացիական պատերազմի սկիզբ դարձաւ եւ շարունակուեց մինչեւ 1990 թուականը:

Լիբանանի իրավիճակը շատ աւելի բարդ է, քան այս տողերում ներկայացուածը, իսկ Իսրայէլի, Սիրիայի եւ Ամերիկայի կողմից արտաքին միջամտութիւնների հարցը անհամեմատ աւելի խրթին է: Խնդիրն այն է, որ կլանները դարձան իրականութիւն, իսկ լիբանանեան կառավարութիւնը՝ անտեղի մի կառոյց: 1989-ին խմբաւորումների միջեւ համաձայնութիւն կնքուեց, որը մասամբ վերջ դրեց ներքին կռիւներին: Բայց պետութիւնը մնաց կլանների համբերատար ինքնազսպուածութեան ձեռքերում: Քարտէզի վրայ պետութիւնն էր պատկերուած, բայց իրականում այն փոքրիկ խմբաւորումների մի երկիր էր, որտեղ այդ խմբաւորումները մէկը միւսի դէմ էր կռւում անվտանգութեան եւ իշխանութեան համար: Լիբանանը դեռեւս մնում է այն երկիրը, որտեղ հակամարտող խմբաւորումների առաջնորդներն են դարձել ազգային քաղաքագէտներ եւ որեւէ ժամանակ, ճնշումների տակ, նրանք կարող են իրենց ռազմական դիրքերին վերադառնալ՝ վերահաստատելով կլանների գոյութիւնը:

### ԿՐԿՆՕՐԻՆԱԿՈՒՄՆԵՐ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՒ ԻՐԱՔՈՒՄ

Նոյն գործընթացը տեղի է ունենում Սիրիայում: Կամայական ազգային պետութիւնը դարձել է մրցակցող խմբաւորումների կամ կլանների մի տարածաշրջան:

Ալաւիները՝ Բաշար էլ Ասադի գլխաւորութեամբ (ով խմբաւորման առաջնորդի եւ նախագահի դերն է կատարում) իշխում էին երկրին: Տարբեր երկրների աջակցութեամբ տեղի ունեցած ապստամբութիւնը ստիպեց ալաւիներին նահանջել: Ապստամբներն իրենք էլ միասնական չէին, բաժանուած էին տարբեր խմբաւորումների: Այժմ Սիրիան Լիբանանի օրինակին է հետեւում: Գոյութիւն ունի մէկ մեծ կլան, որը սակայն ի վիճակի չէ խորտակելու միւս բոլոր փոքր կլաններին: Վերջիններս էլ ի վիճակի չեն խորտակելու մեծ կլանին: Փակուղային իրավիճակ է, եւ եթէ նոյնիսկ ալաւիները պարտուեն, թշնամական խմբաւորումները այնքան են պառակտուած, որ դժուար է պատկերացնել, թէ ինչպէս է Սիրիան դարձեալ «երկիր» դառնալու: Թուրքիան, Սաուդեան Արաբիան, Իսրայէլը եւ Մ. Նահանգները պաշտպանում են տարբեր կլանների, բայց վերջին հաշուով կլաններն իրենց գոյութիւնն են ամրապնդում:

Իրաքում էլ դրութիւնը նոյնն է: Ամերիկացիների դուրս գալուց յետոյ ստեղծուած կառավարութիւնը հիմնականում շիաներից էր բաղկացած, որոնք միասնական չէին: Սուննիները մեծ մասամբ դուրս էին մնացել եւ իրենց զգում էին մեկուսացուած, մարգինացուած: Տարբեր ցեղերից եւ կլաններից, ինչպէս նաեւ իսլամական պետութեան նման քաղաքա-կրօնական

Շար.ը էջ 19



# «ՆՈՐ ԶԱՐԹՕՆՔ»Ը ՀԱՐԹԱԿ Է, ՈՐԸ ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ՝ ԾԱՌԱՅՈՒՄ Է ՄԵԶ ՊԷՍ ՏԱՐԱՏԵՍԱԿ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԻՆ

Ներկայացնում ենք հարցազրոյցը Պոլսում գործող «Նոր Զարթօնք» հարթակի հիմնադիրներից Սայաթ Թեքիրի հետ: «Նոր Զարթօնքը» թէեւ սկիզբ է առնում Թուրքիայի հայ համայնքից, սակայն այն տարատեսակ խտրականութիւնների դէմ պայքարի հարթակ է:

**Ի՞նչ ասել է «Նոր Զարթօնք» կամ «Նորզարթօնքցի»...**

15 տարի առաջ, խումբ մը գիտակից եւ ջերմ հայրենասէրներ, գլխաւորութեամբ ազգային-հասարակական գործիչ, «Քաջ Նազար» հանդէսի 43 տարիներու խմբագիր-հրատարակիչ եւ «Քաջ Նազար» հեռուստաժամի հիմնադիր ու քսան տարիներու վարիչ՝ Յովհաննէս Բալայեանի, հիմը դրին «Հայաստանի ծնողազուրկ հաշմանդամ երեխաներու մանկատուներու վերանորոգութեան» սրբազան գործին:

Արդարեւ, բոլոր անոնք որոնք մօտէն ծանօթ են այս կազմակերպութեան, եւ մանաւանդ անոր նախագահ՝ Յովհաննէս Բալայեանի զոհողութեան եւ հայրենանուէր աշխատանքներուն, պարզապէս գնահատանքի եւ օրհնութեան խօսք ունին անոնց:

Բնութեան եւ ճակատագրի կողմէ դժբախտացած այս մանուկներուն օգնելու եւ անոնց դէմքին վրայ ժպիտ, ուրախութիւն եւ յոյս դնելու համար այս ֆոնդը 15 տարի շարունակ ձեռք երկարած է հայրենիքի մեր մինուճար մանուկներուն, արժանանալով Հայրենիքի եւ Սփիւռքի հայութեան ամենաջերմ գնահատանքին:

Սեպտեմբեր 21-ի թելեթոնէն ելոյթ պիտի ունենան հոգեւոր-ազգային-հասարակական դէմքեր եւ իրենց սրտագին կոչերով սատար եւ նեցուկ պիտի կանգնին այս աշխատանքին: Իսկ մեր ժողովուրդը, ինչպէս անցեալին, մեծատունը իր գանձով, համեստ աշխատողը իր լումայով, բայց բոլորը սրտով ու հոգիով իրենց նպաստը պիտի բերեն հայրենանուէր այս պատուական գործին:

Պիտի ցուցադրուին բազմաթիւ ֆիլմեր, տեսաերիզներ եւ նկարներ, որպէսզի ժողովուրդը ականատես ըլլայ այս կազմակերպութեան հայրենասէր գործին: Մանկատուներու նորոգում, հաշմանդամներուն եւ ծնողազուրկ մանուկներուն տօնական օրերու նուէրներ եւ այլ տեսակի օգնութիւններ, որոնք միայն պատիւ կը բերեն նուիրատուներուն եւ այս կազմակերպութեան անդամներուն, գլխաւորութեամբ՝ Յովհաննէս Բալայեանի:




Թելեթոնին իրենց սիրայօժար մասնակցութիւնը պիտի բերեն գաղութիս մեծանուն երգիչներ, ասմունքողներ եւ արուեստագէտներ, որոնք իրենց սրտաշարժ երգերով եւ արտասանութիւններով պիտի խանդավառեն եւ խորապէս պիտի յուզեն ներկաները:

Այս դրամահաւաքին մասնակցելու համար կարելի է չէքերը գրել A.A.O.C. Fund անունին եւ ղրկել P.O.Box 250038, Glendale, CA 91225 հասցէին:

Բոլոր նուիրատուութիւնները տուրքէ զերծ են:

Նմանապէս կարելի է հեռաձայնել (818) 246-0125, (818) 246-2070 կամ՝ (818) 239-6880 թիւերուն: Կարելի է E-Mail-ով ալ կապ պահել հետեւեալ հասցէով՝

forourkids99@gmail.com:

Սիրելի հայրենակիցներ, կոչ կ'ընենք ձեզի, որ ձեր սրտին հետ նաեւ ձեր գրպանը լայն բանալով, մարդկային ամենէն ազնիւ գործը պիտի կատարէք կարիքաւոր հայ փոքրիկներուն հանգստաւէտ բնակարաններ տրամադրելու եւ անոնց ապագան կերտելու, անձանձրոյթ ձեր նիւթականը հասցնել: Նոյնպէս ձեր հարազատներուն, ազգականներուն եւ ընկերներուն կոչ ընել, որպէսզի իրենք ալ մասնակից դառնան մարդասիրական եւ աստուածահաճոյ այս սուրբ գործին:

Բոլորիդ վարձքը կատար ըլլայ:

# ՀՀ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԹԱԳՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ «ՄԱՅՐԵՆԻԻ ԴԵՍՊԱՆ» ՄԵԴԱԼՈՎ



Սեպտեմբերի 4-ին ՀՀ սփիւռքի նախարարն ընդունեց ամերիկաբնակ ասմունքող, լրագրող, հանդիսավար, «Լարք» երաժշտանոցի տնօրէն Թագուհի Արզումանեանին:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ դերասանուհի, ՀԽՍՀ եւ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վարդուհի Վարդերեսեանը:

Ողջունելով հիւրերին նախարարը մասնաւորապէս ասաց. «Թագուհին իրեն նուիրել է հայապահպանութեանը, մայրենի լեզուի, ազգային մշակոյթի պահպանմանը, հայակերտումի սրբազան գործին»: Թագուհի Արզումանեանը պարգեւատրուեց ՀՀ սփիւռքի նախարարութեան «Մայրենիի դեսպան» մեդալով:

# ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Հայագիտական Ուսումնասիրութիւններու Ընկերակցութիւնը (ՀՈՒԸ) կը կազմակերպէ աշխատանքային գիտաժողով մը՝ նշելու համար իր հիմնադրման (1974) քառասնամեակը: Գիտաժողովը, Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) մասնակցութեամբ, ի մի պիտի բերէ քառասուն մասնակից, որոնցմէ քանը՝ Հայաստանէն, քանն ալ՝ արտասահմանէն, զեկուցումներով հանդէս գալու համար հետեւեալ նիւթերու շուրջ. ա) Հայ ժողովուրդի պատմութեան անցեալ հազարամեակի անբաւարար ուսումնասիրուած նիւթեր, բ) Ցեղասպանութեան արտացոլումը հայ եւ ոչ-հայ արուեստներու եւ մշակոյթներու մէջ, գ) վերապրողներու վկայութիւնները, յուշերն ու յիշողութիւնները, դ) նուաճումներ, մարտահրաւէրներ եւ նոր մօտեցումներ ժամանակակից գրականութեան եւ գրականագիտութեան ինչպէս նաեւ պատմագրութեան մէջ, եւ՝ ե) քսանմէկերորդ դարու Հայ Սփիւռքը: Գիտաժողովը, երեք օր տեւողութեամբ, 3-5 Հոկտեմբեր, 2014, իր նիստերը պիտի գումարէ ՀՀ ԳԱ Ակադեմիայի Նախագահութեան նիստերու դահլիճէն ներս:

Հայագիտական Ուսումնասիրութիւններու Ընկերակցութիւնը հիմնուած է Ռիչարտ Յովհաննիսեանի նախաձեռնութեամբ եւ իր եւ խումբ մը հայագէտ գիտնականներու կողմէ՝ Նինա Կարսոյեան, Տիգրան Գույմճեան, Աւետիս Սանճեան եւ Ռոպերթ Թոմսոն: Նպատակը եղած է սատարել եւ զարկ տալ Հայագիտութեան՝ տեղական եւ միջազգային գիտաժողովներու, հրատարակութիւններու եւ գիտական հաւաքներու միջոցաւ: ՀՈՒԸ-ն կը հրատարակէ իր լրաբերը՝ Newsletter եւ գիտական պարբերաթերթը՝ Journal of the Society for Armenian Studies. Ընկերակցութեան անդամներուն մեծ մասը Ամերիկայէն է, բայց հետզհետէ կ'աճի Եւրոպայէն, Քանատայէն եւ Միջին Արեւելքէն անդամակցողներու թիւը: Հայագիտութեամբ հետաքրքրուողները սիրով կը հրաւիրուին անդամակցելու: Որպէս ոչ-քուէարկող, համակիր անդամներ, անոնք ձրիաբար կը ստանան ՀՈՒԸ-ի լրաբերն ու պարբերաթերթը: Յաւելեալ տեղեկութիւններու կամ անդամակցելու համար, կը խնդրենք որ այցելէք ՀՈՒԸ-ի կայքը 4 societyforarmenianstudies.com, կամ դիմէք ՀՈՒԸ-ի Քարտուղարութեան հետեւեալ հասցէով.

SAS Secretariat
Armenian Studies Program
5245 N Backer Ave PB4
Fresno, CA 93740-8001
Tel.: 559-278-2669
Email: barlowd@csufresno.edu

www.massisweekly.com


In collaboration with
SERJ TANKIAN
ԼԱՐՔ
LARK MUSICAL SOCIETY
Presents
Perennial Յաւերժի ուխտագնացներ PILGRIMS
"Motherland at heart"
1915-2015
Centennial of the Armenian Genocide
SERJ Tankian
Symphonic compositions by Serj Tankian with John Psathas.
Opera chorus selections by Verdi, Purcell, Wagner, Tchouhadjian and Tigranian
Featuring:
THE LARK MASTERSINGERS AND ORCHESTRA
Under the direction of
Vatsche Barsoumian
Saturday, September 20, 2014
8:00 P.M.
The Ambassador Auditorium
131 South Saint John Avenue, Pasadena, CA 91105
Proceeds will help fund the
Lark Community Theater/Museum
TICKETS
$85, $65, $45 ($25 for students and seniors)
For Tickets and information please call Lark at:
818.500.9997
Tickets can also be purchased at
www.itsmyseat.com/lark
itsmyseat.com
your tickets / your advantage
LARK, 543 Arden Ave.,
Glendale, CA 91203
Tel: 818.500.9997
Online donations can be made at: www.larkmusicalsociety.com

# ՊՈՂՊԱՏԻ ՊԷՍ ՍԷՐ, ՈՉ ԹԷ ՅՐԱԲՈՒԽԻ ՊԷՍ ԺԱՅԹՔԵԼ ԵՒ ՅԱՆԳՉԵԼ

Ռ. ԿՈՐԻԽՆ

Դերենիկի եւ Աստղիկի ծանօթութիւնը սկսւում է մի հանդիպումից:

Դերենիկը պարծանքով է յիշատակում:

Այդ հանդիպումը անջնջելիօրէն արձանագրուել է մտապատկերումս եւ չի ջնջուելու: Դա 1993 թուականին էր, հոկտեմբեր ամիս, Ատրպատականի համալսարանում ընդհանուր ուսանողութեան հանդիպում էր նախագահի հետ, աղջիկ ուսանողները՝ իւրաքանչիւրը ծածկուած զգեստով (Իրանի իսլամական օրէնքի համաձայն կանայք պէտք է ծածկուեն, միայն դէմքով բաց) առանձին ձախ շարքերում, իսկ տղաները՝ աջ, ես դիպուածով նստել էի աղջիկների հարեւանութեան շարքի ուղղութեան միջանցքով բաժանուող: Իմ հայեացքս շարունակ հարեւանութեանս նստած աղջկայ վրայ էր, որը ընկերուհու կողքին լրջօրէն հետեւում էր արարողութեան, նրան հայի էի նմանեցնում: Ուսումնական չորրորդ տարիս էր եւ բախտ չէր վիճակուել հայ ուսանող աղջկայ հանդիպել, ծանօթանալ: Որոշեցի համագումարի աւարտին մօտենամ եւ նրա ազգութիւնը ստուգեմ: Այդ մտմտուքի մէջ էի, երբ աւարտուեց հանդիպումը, անմիջապէս մօտեցայ օրիորդին պարսկերէն խօսելով.

-Ինձ շատ պիտի ներէք ձեզ անհանգստացնելու համար, խնդրում եմ չնեղանաք, ես որեւէ նպատակ չունեմ, լոկ ինձ հետաքրքրում է ձեր ազգութիւնը, ես հայ եմ, արդեօք դուք էլ էք հա՞յ, նա ինձ պարսկերէնով չպատասխանեց, այլ՝ հայերէնով.

-Այո՛, հայ եմ:

-Ուրախութիւնս ժպիտով արտայայտեցի մի քայլ իրեն մօտենալով եւ հայերէն խօսելով:

-Չորս տարի է այստեղ ուսանում եմ, սա առաջին անգամն է, որ հայ ուսանողուհու եմ հանդիպում, մեծապէս ուրախ եմ, Թեհրանից եմ, հանրակացարանում եմ ապրում, ցանկութիւն ունեմ հայկական շրջանակ ունենալ եւ հայերի հետ շփուել, օտարութեան մէջ մարդս հայ է փնտրում, ծանօթներիցս մէկն էր ասում եւ մի հետաքրքիր յուշ պատմեց: Ներողութիւն եմ խնդրում, յանկարծ չլինի ձեր համբերութիւնը չարաշահեմ, եթէ նկատում էք ձեզ ձանձրացնում եմ, կարող էք վերջ համարել մեր խօսակցութեան:

-Ո՛չ, կարծեմ հետաքրքիր պիտի լինի, խնդրեմ, շարունակեցէք:

-Ինձ ծանօթ՝ Արտաշէս Քէշիշեանը հետեւեալ պատմութիւնն էր պատմում.

-Եգիպտոսի Կահիրէ մայրաքաղաքում Բելճիքայի դեսպանատնումն էի աշխատում, գործի ընթացքին փողոցից անցնելիս վթարի ենթարկուեցի, ձախ ոտքս ջարդուեց, ինձ անմիջապէս հիւանդանոց հասցրին, ապա մի քանի օրից ինձ փոխադրեցին Բելճիքա, հիւանդանոցում երկար պիտի մնայի, ծանօթ չունէի, շատ էի նեղանում, բուժքրոջ հասկացրեցի հեռախօսների գիրքը ինձ բերի, նրա մէջ փնտրեցի (եան) վերջաւորութեան անուն, գտայ եւ զանգեցի, մի հայ կին էր, բացատրեցի իմ զանգելու դրդապատճառը, նրանք ընտանիքով եկան եւ ինձ եղբօր նման հոգատարան, մի քիչ ապաքինուելուց յետոյ իրենց տուն փոխադրելով երկար օրեր խնամեցին:

-Հետաքրքիր է, մեծապէս գնահատանքի արժանի, առանց ճանաչելու վեհանձնօրէն նրան օգնում են միայն հայ լինելուն համար, արդարեւ հազար անգամ բռաւօ, այդպիսի հայեր հայի գոյութիւնը բարձր են դասում եւ մեծ գոհողութիւնների գնում: Այո՛, պատմութեան բովում այդպիսիների սխրանքով է, որ մեր ազգը, ժողովուրդը գոյատեւել է որպէս պատուաւոր ազգ եւ ժողովուրդ անմեկնելի տառապանքների ենթարկուելուց յետոյ:

Օրիորդի հետ զրուցելով սրահից դուրս եկանք, դրսում արեւն էր անամպ երկնքում շողշողում եւ ինչ գոյնզգոյն ցոլքերով էր ճառագում ծառերի կիսադեղնած սաղարթների ընդմիջից, աշուն էր, սակայն հակառակ նրան գարնան բոյր ու հոտն ունէր, օդը զով էր ու հաճելի, համալսարանի միջավայրից դուրս եկանք, նա խոստացաւ ինձ իր երկու եղբայրների հետ ծանօթացնի, անունս եւ հեռախօսահամարս փոխանցեցի իրեն: Մենք բաժանուեցինք, առանց որեւէ սիրային զգացում մարմնաւորուի իմ մէջ, փափագս էր առողջ յարաբերութիւն:

Աստղիկի մեկնելուց յետոյ անդրադարձայ, որ անքաղաքավարն եմ եղել նրա հետ չուղեկցելով մինչեւ իրենց տուն, միտք ու ուղեղս դասերովս տարուած լինելով, մեքենաշինութեան ճիւղն էի ուսանում, ժամերն ինձ համար արժէք ունէին, ազատ ժամերիս ճիւղին կապուող տարբեր հեղինակների գրքեր էի ընթերցում աւելի զարկ տալու իմ տեղեկութիւններին հետագայ իմ աւարտաճառի համար:

Դասերովս խիստ զբաղուած լինելով բոլորովին մոռացել էի Աստղիկի խոստումը, սակայն օրերից մի օր երբ պատրաստւում էի սենեակիցս դուրս գնալ մի բանով քաղցածութիւնս յագեցնելու, երբ հեռախօսը իր աղաղակող ձայնով կանչեց.

-Լսում եմ, համեցէք:

-Բարի իրիկուն, կարող եմ պրն. Դերենիկի հետ խօսել:

-Ձեզ հետ խօսողը ես եմ, համեցէք:

-Ձեր համալսարանի ուսանողուհի՝ Աստղիկի եղբայրն եմ, անունս Վարդան է, դուք քրոջս առաջարկել էիք հայկական շրջանակ ունենալ երբեմն նիստ ու կացի եւ յարաբերուելու առումով, սա ձեր ցանկութիւնն է եղել, ես զանգել եմ պայմանաւորուելու եւ հանդիպելու համար, որ՞ օրուայ համար պատրաստ կը լինէք, խնդրեմ, ասէք, ես մեքենայով կը գամ ձեր ետեւից:

-Նախ շատ շնորհակալ եմ, ես յաջորդ շաբաթուայ վերջաւորութեան ձեզ կը սպասեմ:

-Շատ բարի, պայմանաւորուեցինք, բարի գիշեր:

Հեռախօսազրոյցը ինձ ուրախացրեց, միտքս եկաւ Աստղիկը, որ կարեւորութեամբ նկատի էր առել իմ առաջարկը, ապագայի քաղցր հեռանկարով տարուած սենեակս թողի դրսում փորս կշտացնելու մտքով:

Համալսարանի դասերը ժրաջանութեամբ շարունակում էի, աշխատում էի որեւէ դասախօսի դասից չբացակայել եւ ուշ ի ուշոյ հետեւում եւ արձանագրում էի այն ինչ ասւում եւ պարտականութիւն էր տրւում, համոզուած էի, որ իմ ապագայիս յաջողութիւնը կապուած է իմ ջանասիրութիւնից, լաւ եւ բարձր գնահատագրերով համալսարանս աւարտել եւ աշխատանքի անցնել, այսպիսով թէ՛ ծնողներիս նեղութիւնները գնահատած լինեմ, թէ՛ ինձ համար պատուաւոր ապագայ ստեղծեմ:

Ժամադրութեան օրը եւ ժամը հասել էր, կազմ ու պատրաստ սենեակումս սպասում էի կանչի, ի միջի այլոց միտքս հանդիպման մասին էր բանում, հարցեր էին յաջորդում մէկը միւսին. -առանց նշանի ինչպէ՞ս պիտի ճանաչեմ Վարդանին, մեր անդրանիկ հանդիպման համար ի՞նչ ծրագիր է նախատեսել նա: Այդ մտքերի մէջ էի, երբ հեռախօսը զանգեց:

-Պրն. Դերենի՛կ, Վարդան անունով մէկը ձեզ է սպասում:

Հանրակացարանի պահակն էր.

-Շատ բարի, շնորհակալ եմ, անմիջապէս իջնելու եմ:

Սանդուխներից իջայ դէպի մուտքը, դռան առջեւ մի քանի հոգիներ էին կանգնած, չիմացայ որ մէկին դիմեմ, ստիպուած մօտեցայ պահակին հարցնելով.

-Ո՞վ է սպասում ինձ:

-Էն անկիւնում կանգնած երիտասարդը:

Պահակի ցուցմունքին հետեւելով ուղղուեցի դէպի նա:

-Դերենիկն եմ ասելով ձեռքս երկարեցի:

-Ես վարդանն եմ:

-Շատ ուրախ եմ:

Երկու անծանօթ հայերի հանդիպում, ձեռնուելու եւ ողջագուրուելու րոպէին աններեւոյթ ջերմութիւն ներարկուեց հոգումս, քաղաքում օտարականիս մէջ, քաղցր գոհունակութեան ժպիտներ փոխանակուեց եւ ես ինձ զգացի ամուր եւ հպարտ:

-Դէհ որ այդպէս է, գնանք, մեքենաս այն փողոցի վրայ եմ պահել:

Աշնանային արեւոտ օր, մեղմ քամու պաղ հոսանքը զգալի էր ծառերի տերեւների խարշափումից, արեւի գունդը դէպի քաղաքի արեւմտեան կողմն էր յամրաքայլ առաջանում, նրա յետ միջօրէի ճառագայթների գաղջ հուրքը տարածուած էր քաղաքի վրայ դեռ ոչ մայրամուտի նշաններով:

Երկու երիտասարդ հայեր ինքնաշարժի մէջ անխօս, Վարդանը ինքնաշարժն է վարում, իսկ ես սուսիկ-փուսիկ կողքին նստած հետեւում եմ, թէ ինչպէս արագ փողոցները մէկը միւսին յաջորդելով անցնում է, արդէն գտնւում ենք Լիլաւայ քաղաքամասում, նա մի շէնքի առաջ կանգնեց եւ դառնալով ինձ ասաց.

-Սա մեր տունն է, խնդրեմ, համեցէք, տնեցիները ձեզ են սպասում:

Շփոթուած էի հրաւէրից, չգիտէի ինչ ասել, մերժել չէր կարելի, հաւանաբար Աստիկը իմ այդ պատմութեան տպաւորութեան ներքոյ ընտանիքի հետ խօսելով համաձայնուել էր ինձ հրաւիրել: Շէնքի մուտքը ուղղակի պողոտայից էր երկու յարկերից բաղկացած, աստիճանները բարձրանալիս ինձ դիմաւորեց Աստղիկը, ներս մտնելով յարկաբաժին նա ինձ ներկայացրեց իր ծնողներին եւ երկրորդ եղբօրը՝ Անդրանիկին: Գեղեցիկ կահաւորուած բնակարան, տեղ գրաւեցի բազկաթոռի վրայ Վարդանի եւ Անդրանիկի մօտ, իսկ նա ու ծնողները դիմացս: Ժպտուներես դէմքեր սպասում էին, որ ես խօսեմ: Իրանահայ ընտանիքներում համալսարանականը յարգուած է, նիստ ու կացերում նրա խօսքը կշիռ ունի: Շուրջս մի հայեացք նետելով տեսայ բոլորը իմ խօսելուն են սպասում, չուշացրեցի:

-Շատ ուրախ եմ ձեր յարկի ներքոյ եմ գտնւում, օրիորդ Աստղիկի առաջին հանդիպումից արդէն իսկ կռահեցի, որ նա զտարիւն հայկական ընտանիքում ծնուած, դաստիարակուած ու մեծացած մէկը պիտի լինի իր հայ աղջկայ հպարտութեամբ, խելացիութեամբ եւ մանաւանդ մեր ոսկեղնիկ լեզուի մաքուր ու ջինջ արտայայտութեամբ: Շատ շնորհակալ եմ օրիորդ Աստղիկի միջոցով այս առիթը տրուեց ինձ ձեր նման հայ ընտանիքի հետ ծանօթանալու:

Իմ կարճ ելոյթի ընթացքում բոլոր ընտանեկան կազմը լուռ ու մունջ լսում էր ինձ հետաքրքիր պայծառացած դէմքով՝ թաքնուած գոհունակութեամբ:

Ընտանիքի հայրը ճերմակ մազերով, միջակ հասակով, առնական հայկական քիթը դէմքին եւ հայ արհեստաւորի մարզուած ձեռքերով, որ մինչ այդ բազկաթոռին թիկնած լուռ մտիկ էր անում ինձ, շտկուեց, ոգեւորուած իմ խօսքերից քաղցրաժպիտ հայեացքը ինձ ուղղելով հայրական սիրալիր յորդորով ասաց.

-Նախ տղայ ջան, կը ներես, ասացիր՝ անունդ ի՞նչ է:

Շփոթ վիճակ տիրեց ինձ, ինչպէս կոչէի իրեն, Աստղիկը ծնողներին ներկայացնելիս նրանց անունները չասաց, ամենալաւ տարբերակը համարեցի, իրեն հայրիկ կոչել, քանի որ գտնւում էի հայ աւանդական ընտանիքի օջախում, ուստի ամօթխած ձայնով ասացի.

-Հայրի՛կ, անունս՝ Դերենիկ է:

-Պրն. Դերենիկ, քո խօսքերը ինձ տպաւորեցին, մարդին չափւում են իր խօսքերով: Երիտասա՛րդ, էս տունը հայի տուն է, երբ քեզ մենակ ես զգում առանց քաշուելու ե՛կ, քեզ պէս կիրթ երիտասարդի ներկայութիւնը ուրախալի եւ հաճելի կը լինի, քեզ ազատ զգայ, քո ծնողիդ օջախը համարիր:

Հայրիկի այդ յարգալից արտայայտութիւնը չէր կարելի անպատասխան թողնել.

-Շնորհակալ եմ ինձ հարազատի պէս էք ընդունում, թող որ շէնը հաստատ տնեցիներով ողջ ու առողջ հանապազօր վայելեն ձեր հայրական սէրն ու գուրգուրանքը նորանոր յաջողութիւններով:

Սենեակում եռ ու զեռ էր սկսել, Աստղիկն ու մայրիկը ոտքի վրայ խոհանոցից ամանեղէններ էին փոխադրում խորտիկներով լեցուն հիւրասենեակի ճաշասեղանի վրայ, երբեմն էլ պատուէրներով տղաներին օգնութեան կանչելով: Դէ՛հ, հայ օջա՛խ, առանց հիւրասիրութեան չէր կարելի պատկերացնել:

Իմ հետաքրքրութիւնը չդադարեց, հայեացքս այս կողմ ու այն կողմ ուղղելով կահ կարասիներն եմ դիտում, պատերից կախուած լուսանկարներին եմ նայում, ընտանեկան պատկերներ շրջանակների մէջ, ապա մեծադիր գեղեցիկ պաստառը Սիս ու Մասիսի Արարատեան դաշտը բարդի ծառերով, մօտեցայ ստուգելու համար ձեռագործ լինելը, Անդրանիկը միացաւ ինձ բացատրութիւն տալով.

Շար.ը էջ 19

## ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

*Ժամանակը, որմէ կախեալ են շատ մը ճակատագրական կացութիւններ, շատ արագ կ՛ընթանայ, բացի երբ մարդիկ գտնուին սպասողական վիճակի մէջ: Որքան որ ժամանակի ըմբռնումը կարեւոր է մեր կեանքի ընթացքին, նոյնքան՝ եթէ ոչ աւելի, կարեւոր է նաեւ սպասելու կարողութիւնը կամ՝ համբերութիւնը:*

*Ժամանակի նման՝ սպասողական վիճակը անբաժանելի մաս մըն է մեր կեանքէն: Յաճախ մենք մեզ կը գտնենք սպասողական վիճակի մէջ: Կը սպասենք մեր տարեդարձին օրը, կը սպասենք կարեւոր հեռաձայնային կապեր, կը սպասենք աշխատանքային ե-նամակներ, whatsapp-ի նամակներ, բժշկական քննութեան արդիւնքներ, համալսարանի ընդունման պատասխան, պետական քննութիւններու արդիւնքներ, եւայլն: Թէ՛ ժխտական եւ թէ՛ դրական հետեւանքներու պարագային, սպասողական վիճակը մեր մէջ կը յառաջացնէ ճնշուածային խառնուրդով հետաքրքրութիւն մը, որ երբեմն այնքան սաստիկ կ՛ըլլայ, որ սպասման ժամանակամիջոցը տհաճ կը թուի մեզի:*

*Եթէ սպասողական վիճակը հաճելի ըլլար, հաւանաբար այսօր այս յօդուածը մէջտեղ պիտի չգար: Հարցը այն է, որ համբերութիւն պահանջող կացութիւնները այնքան շատ են, այնքան կարեւոր են եւ միեւնոյն ժամանակ այնքան տհաճ են, որ անկարելի է չմտածել անոնց էութեան մասին:*

*Ժամանակի նման, սպասողական վիճակը ընթացք մըն է:*

*Ժամանակը (եւ համբերութիւնը) երբեք նպատակ չեն եղած:*

*Անոնք միշտ եղած են միջոցներ՝ հետագային բան մը մէջտեղ բերելու կամ նպատակ մը իրագործելու համար: Երբ զգացական գետնի վրայ կարենանք ընդունիլ թէ սպասումը պարզապէս գործընթաց մըն է այսինքն՝ process եւ ոչ թէ նպատակ, կը կարծեմ որ քիչ թէ շատ կը նուազի անոր տհաճութիւնը:*

*Թէեւ գաղտնիք մը չէ որ կը բացայայտեմ, բայց համբերութեան եւ սպասումի խարիսխը յոյսն է կամ ապագայի նկատմամբ հայեացքը: Պայման չէ, որ համբերութիւնը բերէ դրականութիւն: Ո՞վ ըսաւ, որ այստեղ կարեւորը հետեւանքն է: Բոլորս լաւ գիտենք թէ կեանքի հետեւանքը մահ է, այս տրամաբանութեամբ կեանքը եւս համբերութեան նման գործընթաց է: Մեր կեանքի ընթացքին, իրականութեան մէջ, միշտ չէ որ կը մտածենք մահուան մասին: Երբեմն կը յիշենք որ անմահ չենք, երբեմն կորուստի ցաւը երկար կը տեւէ, բայց ընդհանուր առմամբ մեր կեանքը կը շարունակենք՝ մահուան գաղափարը թաղելով մեր ենթագիտակցութեան մէջ:*

*Սակայն սպասումի ժամանակ, քիչեր են, որոնք կը յաջողին ապրիլ ու վայելել այս գործընթացը: Երբ սպասողական վիճակի մէջ ըլլանք մեր միտքը չափազանց աշխուժութեամբ կը կեդրոնանայ հետեւանքին կամ սպասուած առարկային վրայ:*

*Այս պարագային, համբերութիւնը որպէս գործընթաց կը կորսնցնէ իր արժէքն ու իրաւունքը:*

*Եթէ յաջողինք համբերութեան տալ իր իրաւունքը եւ կարենանք զայն ճիշդ արժեւորել, քանի մը քայլ եւս կը մօտենանք երջանկութեան: Ձեմ կրնար վստահեցնել թէ ի վերջոյ պիտի նստինք երջանկութեան տաքուկ գիրկը, բայց ո՞վ ըսաւ այդ է կարեւորը: Նպատակը այն է, որ մարդ գերի չդառնայ իր նպատակին եւ հաճոյք ստանայ անոր հասնելու գործընթացի իւրաքանչիւր պահէն:*

## ՁԵՌԱԳԻՐԸ ԱՒԵԼԻ ՕԳՏԱԿԱՐ Է ՄԻՏՔԻՆ ՔԱՆ ՏՊԱԳԻՐԸ

*Մանկապարտէզին մէջ առաջնահերթութիւններէն մէկն է փոքրիկ աշակերտներուն սորվեցնել այբուբենը, գլխագիր եւ փոքր տառերը: Տառերը սորվելէ ետք, փոքրերը նաեւ կը սորվին գրել բառեր, նախադասութիւններ, պարբերութիւններ եւ նոյնիսկ շարադրութիւններ: Առաջին հանգրուանին փոքրերը կը սորվին տառերը կամ բառերը պարզապէս ընդօրինակել եւ ապա կ՛անցնին երկրորդ եւ հիմնական հանգրուանին, ուր անոնք կը յաջողին գրաւոր ձեւով արտայայտել իրենց միտքերն ու գաղափարները:*

*Ոմանք նաեւ բախտաւոր են, որովհետեւ գիրերը սորվելու կողքին նաեւ կը սորվին գեղագրութիւն՝ աւելի գեղեցիկ եւ հասկնալի ձեռագիր ունենալու համար: Սակայն, ներկայիս գեղագրութիւնը կը համարուի երկրորդական կարողութիւն, որովհետեւ ձեռագիրը արդէն կորսնցուցած է իր համբաւը:*

*Ներկայիս, ձեռագրի փոխարէն մեծ հռչակ կը վայելեն տպագիր տառերը: Keyboard-ը կը փոխարինէ մարդուն մատներն ու ձեռքերը եւ կը ստեղծէ բոլորին հասկնալի եւ կոկիկ տառեր: Թէեւ դպրոցները տակաւին կը գնահատեն ձեռագիրը, համալսարաններու մէջ բոլոր աշխատանքները կը կատարուին տպագրութեամբ՝ օգտագործելով համակարգիչը:*

*Կը յիշեմ, որպէս աշակերտ խսկապէս կը նեղուէի ձեռագրով պատրաստուած գրաւորի կամ քննութեան հարցարաններէն: Տպագիրը աւելի գեղեցիկ, կոկիկ եւ տպաւորիչ էր: Այս բոլորին կողքին, ինչո՞ւ համար ուսուցիչներ չէին կրկնար քայլ պահել փոփոխութիւններուն հետ:*

*Վերջերս, այս հարցով նաեւ մտահոգուած են գիտնականները որոնք բազմաթիւ ուսումնասիրութիւններ կատարած են քննելու համար ձեռագրի եւ տպագրութեան օգուտները՝ ուղեղի եւ մտքի առողջութեան համար:*

*Այս ծիրին մէջ նորագոյն հետազօտութիւնները ցոյց կու տան թէ ձեռագիր արտայայտութիւնը կարեւոր գործօն մըն է մտային կարողութիւններու բարելաւման համար: Ըստ մասնագէտներուն, ձեռագրութեամբ արտայայտուիլը կը մարզէ ուղեղը եւ կ՛աշխուժացնէ այն բաժինները որոնք առնչուած են գրելու, ընթերցանութեան եւ մտածելու հետ: Ձեռագրութեան պարագային, կը մարզուին ուղեղի այն մասերը որոնք պատասխանատու են զգացականութեան, մկաններու շարժումի եւ մտածելու:*

*Շար.ը էջ 19*

## ԵՐԲ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՇԽԵՆ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՎՐԱՅ

*Մարդ արարածը իր գոյութեան առաջին օրէն իսկ ունեցած է իղձեր եւ փափաքներ, զորս անպայման կը ջանայ իրականացնել: Այս իղձերը ենթակայական (subjective) են հետեւաբար իւրաքանչիւր անհատի անձնական իղձն է որ զինք կը դարձնէ իւրայատուկ եւ տարբեր ուրիշներէն: Իղձերը կրնան մշակել կեանքի ընթացքը եւ ուղղութիւն տալ մեր առօրեային: Օրինակ. Եթէ մէկը երազ ունի դերասան ըլլալու պէտք է ուսանի եւ մասնագիտանայ դերասանութեան ճիւղին մէջ եւ ձեռք բերէ փորձառութիւն: Հետեւաբար, անոր կեանքի ընթացքը կը դառնայ իր այս նպատակը իրագործելու աշխատանքին շուրջ:*

*Անժխտելի է այն իրողութիւնը թէ մեր իղձերն ու փափաքները կրնան մեզ առաջնորդել դէպի յաջողութիւն: Սակայն, անհրաժեշտ է անդրադառնալ, որ կարգ մը պարագաներու միեւնոյն իղձերը կրնան մեզ մղել թէ՛ երջանկութեան եւ թէ՛ ձախողութեան:*

*Այս մէկը կրնայ պատահիլ երբ մեր նպատակներու իրագործման աշխատանքները վերածուին պարտականութեան:*

*Ի՞նչ կրնայ պատահիլ երբ մեր կեանքին մէջ իշխեն պարտականութիւնները եւ մեր առօրեան հարուստ դառնայ պարտաւորութիւններով: Այս հարցով հետաքրքրուած էր 18-րդ դարու Գերմանացի փիլիսոփայ՝ Իմանուէլ Քանդ, որ ստեղծած է երկու հիմնական գաղափարներ՝ առնչուած պարտաւորութիւններու հետ:*

*Քանդի համաձայն՝ գոյութիւն ունին երկու տեսակ հրամայականներ՝ տեսական եւ բացարձակ: Տեսական հրամայականները (Hypothetical Imperatives) առնչուած են մեր իղձերը իրականացնելու ծրագրին կամ աշխատանքին հետ: Քանդ կը քննարկէ թէ մեր փափաքները կամ նպատակները իրականցնելու աշխատանքները յաճախ կրնան վերածուիլ պարտաւորութեան: Այլ խօսքով, անհատը կ՛անդրադառնայ թէ իր երազը իրականացնելու գործընթացին մէջ իր առօրեան վերածուած է պարտականութեան, որովհետեւ ան այս կամ այն աշխատանքը պէտք է ամբողջացնէ իր նպատակը իրագործելու համար:*

*Այս պարագային, երբ վերանայ անհատին փափաքը կամ իղձը կ՛անհետանան նաեւ անոր հետ կապուած պարտականութիւնները:*

*Բացարձակ հրամայականները (Categorical Imperatives) կը ներկայացնեն չգրուած, սակայն բոլորին կողմէ ընդունուած համաշխարհային օրէնքները, որոնց ստիպուած ենք հետեւիլ եթէ կը փափաքինք համակերպիլ մեր միջավայրին: Բացարձակ հրամայականները անկախ են անձնական իղձերէն եւ փոփոխական չեն, որպէս օրինակ կարելի է այստեղ նշել Տասը Պատուիրանները, որոնց կը հետեւին քրիստոնեայ ընկերութիւնները եւ որոնք փոփոխութեան չեն ենթարկուիր նոյնիսկ հազարաւոր տարիներու վրայ: Այլ խօսքով, քրիստոնեայ անհատ մը կրնայ իր կեանքի ընթացքին պարտաւորուած զգալ հետեւելու կրօնական օրէնքներուն:*

*Այս հրամայականները եւ այլ ներքին կամ արտաքին գործօններ կրնան ազդել մեր հոգեբանական առողջութեան վրայ: Երբ կեանքը վերածուի պարտաւորութիւններ կատարելու սովորութեան, մարդիկ յաճախ կը կորսնցնեն իրենց եռանդն ու ուժը՝ իրենց ուրախութիւնը պահպանելու համար, որովհետեւ կեանքը կը դառնայ ձանձրացուցիչ սովորութիւն:*

*Այս բոլորը յստակացնելու համար կարելի է նկատի առնել հետեւեալ օրինակը. Եթէ կ՛ապրիք ծովեզերեայ քաղաքի մը մէջ եւ ձեզի համար հաճոյք է ծովափ այցելել, բնականաբար երբ եղանակը յարմար ըլլայ կը մտածէք. «Պէտք է ծովափ այցելեմ» նոյնիսկ եթէ այդ օրը չափազանց յոգնած էք: Այսպէս, ձեր փափաքը կը վերածուի պարտականութեան: Ծովափ այցելելու պարագային հաճոյք չէք ստանար, որովհետեւ տուեալ օրը չափազանց յոգնած էք: Ծովափ չայցելելու հետեւանքը կրնայ ըլլալ ձախողութեան եւ ծուլութեան զգացում:*

*Կարեւոր է, որ նախ մարդիկ անդրադառնան թէ մուտք գործած են պարտաւորութիւններու շրջագիծին մէջ եւ սկսած են կորսուիլ անոր մէջ, եւ ապա վերականգնեն իրենց խանդավառութիւնը ու ներուժը՝ իրենց իղձերը իրականացնելու գործընթացը վայելելու համար: Մեր կեանքը գեղեցկացնող եւ արժեւորող գանձերն են մեր երազները եւ նպատակները, որոնք յաճախ կը վերածուին առաքելութեան: Իղձերը, երազները եւ իւրաքանչիւր անհատի առաքելութիւնն է որ կեանքը կը վերածեն գեղեցիկ պտոյտի, որուն իւրաքանչիւր պահը արժանի է գնահատանքի:*

## ՕՐԸ ՀԱՃԵԼԻՕՐԷՆ ՍԿՍԵԼՈՒ ՀԻՆԳ ՁԵՒ

*Գիտականօրէն ապացուցուած ձեւեր, որոնք կը նպաստեն ձեր օրը աւելի հաճելիօրէն սկսելուն:*

*- Առաւօտեան սուրճը խմելու ընթացքին սեղանին փոքրիկ ծաղիկ դրէք:*

*Հոգեբանները կը կարծեն, որ ծաղիկներու կամ առհասարակ բոյսի գոյութիւնը ենթագիտակցօրէն անվտանգութեան զգացում կը յառաջացնէ: Մարդ ենթագիտակցօրէն կը մտածէ, որ եթէ տուեալ վայրին մէջ ծաղիկը կ՛աճի, ուրեմն կարելի է այդտեղ «արմատներ նետել»: Այսպիսով, փոքրիկ ծաղկեփունջի գոյութիւնը առաւօտեան կը ստիպէ հաւատալ, որ օրը յաջող պիտի ըլլայ:*

*- Քնացէք աջ կողի վրայ:*

*Ըստ գիտնականներու՝ աջ կողմի վրայ քնանալը կ՛ազդէ երազներու վրայ: Անոնք պարզած են, որ աջ կողի վրայ քնացող մարդիկ աւելի հաճելի երազներ կը տեսնեն՝ թեթեւութեան, ուրախութեան, խաղաղութեան եւ սիրոյ զգացումով, որմէ ետք կ՛արթննան աւելի լաւ զգացումով եւ կ՛ըլլան աւելի առոյգ:*

*- Մէկ գաւաթ նարինջի հիւթ խմեցէք:*

*Բացի այն, որ նարինջը կ՛արտայայտէ առաւօտեան գոյնն ու տրամադրութիւնը՝ նման ըլլալով արեւուն, անիկա նաեւ հարուստ է B6 կենսանիւթով:*

*- Մէկ ժամ կանուխ քնացէք:*

*Երբ մարդ կը կորսնցնէ*

*Շար.ը էջ 19*

# «ՆՈՐ ԶԱՐԹՕՆՔ»Ը ՅԱՐԹԱԿ Է

*Շարունակուած էջ 7-էն*

*նէն: Այս ընտրական համակարգն էլ է շատ ազդեցիկ: ՏԻՄ ընտրութիւնների ժամանակ «յանկարծ համակարգը չփոխուի» ասելով՝ մարդիկ իրենց ձայնը տուեցին իշխող կուսակցութեանը: Եթէ նայենք, Հայաստանում էլ է նոյն վիճակը. իշխող կուսակցութիւնը իւրաքանչիւր ընտրութեան ժամանակ էլ աւելի է ամրապնդում իր դիրքերը: Դարձել է պահպանողական կուսակցութիւն:*

*Նաեւ եթէ «Նոր Զարթօնք»ը մի բան է ասում, սակայն ուրիշ բան է կատարում, արդէն իսկ խնդիր է: Այն, ինչ քննադատում է, պէտք է իր շարքերում չլինի:*

Նախկինում տեղի ունեցած կոտորածների եւ Ցեղասպանութեան պատճառով Թուրքիայում հայ համայնքը փորձում է աւելի զգոյշ խօսել եւ գործել: Մինչեւ վերջերս պոլսահայ համայնքն ապոլիտիկ դիրքորոշում ունէր, սակայն Կեզիի ցոյցերի ժամանակ «Նոր Զարթօնք»ի գլխաւորութեամբ հայերը եւս մէկ անգամ յիշեցրեցին այս հողերում իրենց գոյութեան մասին: Սա ուղերձ էր, թէ...

*Ը՞ստ էութեան, «Նոր Զարթօնք»ն արդէն 10 տարի է՝ նման միջոցառումներ եւ ցոյցեր է կազմակերպում: Ցեղասպանութեան 90-ամեակին գիտաժողով կազմակերպեցինք: 2006 թ. եւս գիտաժողով կազմակերպեցինք, որին զեկոյցով մասնակցեց նաեւ Հրանդ Տինքը: Նախքան Կեզիի ցոյցերը եւս մասնակցում էինք, սակայն Կեզիի բողոքի ցոյցերը ողջ աշխարհին եւս մէկ անգամ հայերի մասին լսել տուեց. «տես, ասում են՝ հայերն էլ են այնտեղ եղել»: Հասկանում եմ, որ տեղի ունեցած ցաւալի դէպքերը մարդկանց ստիպում են զգուշաւոր լինել, սակայն այլեւս չպէտք է այդպէս լինի: Ղեկավարից, ամիրայից, Թաղականից, աղայից մինչեւ հասարակ շարքային, այսինքն՝ մեր ողջ ժողովրդի համար (պոլսահայ համայնքի) պետութիւնը սահման է գծել: Ասում է՝ ձեր սահմանն այսքան է, ինչ սահմանի մասին է խօսքը, մեր ժողովուրդն անգամ գծած սահմանից մէկ քայլ այս կողմ է կանգնած, անգամ սահմանին չի մօտենում, չի պահանջում իր իրաւունքները: Տարատեսակ պատճառաբանութիւններ է բերում՝ «ոնց էլ լինի, չենք կարող ոչինչ անել, մէկ է՝ սա մեր երկիրը չէ»: Եւ իրաւացի են: Տեսնում ենք յարուցուած դատական գործերի արդիւնքները: Այո՛, մեզ համար սահման են գծել, մենք էլ չենք ուզում այդ սահմանն անցնել: Սահմանը մի կողմ դնենք, մեր ուշքն ու միտքը Լոզանի պայմանագրով մեզ տրուած իրաւունքներն են, սակայն այն մէկ դար առաջ էր. ես ուրիշ աշխարհում եմ ապրում, այլ իրաւունքներ ունեմ: Ինչպէս որ 21-րդ դարում Եւրոպայի երկրներում բնակուող փոքրամասնութիւնները կամ թողենք Եւրոպան, այնտեղ խնդիրներ կան, Գանատայում կամ էլ Պալթեան երկրներում, այսինքն՝ ամենաժողովրդավար երկներում փոքրամասնութիւններն ինչ իրաւունք որ ունեն, մենք էլ ենք դա պահանջում: Եւ ինչպէս որ ասացի, մեր պահանջները միայն հայերի համար չեն:*

*Վերադառնալով Կեզիի զբօսայգուն՝ ասեմ, որ մենք, ըստ էութեան, հայ լինելու համար չէինք այնտեղ: Եւ ոչ էլ այն պատճառով, որ այնտեղ ժամանակին հայկական գերեզմանոց է եղել կամ Կեզի զբօսայգին է: Մենք նախ եւ առաջ այնտեղ էինք՝ պաշտպանելու մեր զբօսայգին: Այդ շրջանում ցոյցերն արգելուած էին, 3-րդ կամուրջը կառուցուեց, բնապահպանութեան համար մի շարք ցոյցեր տեղի ունեցան, եւ մենք առաջին իսկ օրուանից այնտեղ էինք: Գիշերն այգում լուսացրեցինք, անգամ երբ ոստիկանութիւնն առաջին անգամ յարձակուեց ցուցարարների վրայ, այնտեղ էինք: Մենք նոյնպէս մասնակցում էինք այդ բողոքի ցոյցին: Ինչպէս որ մարդիկ բողոքում, իրենց դժգոհութիւնն էին արտայայտում, մենք էլ նրանց նման, նրանցից մէկն էինք: Թաքսիմի հրապարակի կողմից «Նոր Զարթօնք»ի գրասենեակը մօտ է Կեզիին, այն բացեցինք մարդկանց օգնութիւն ցուցաբերելու համար: Լաւ, յաղթեցինք, բա հիմա ի՞նչ ենք անելու, սկսեցինք մտորել: Մտածեցինք, որ այս զբօսայգու վերաբերեալ շատ բանի են անդրադառնալու, սակայն ոչ ոք այս զբօսայգու պատմութեան մասին չի խօսելու: Ասացինք մի քիչ էլ այս զբօսայգու պատմութեանն անդրա դառնանք, որովհետեւ այդ ցոյցերի ժամանակ վարչապետ Էրտողանն ասաց. «դուք պատմութիւն չգիտէք, այնտեղ ժամանակին հրետանու զօրամաս է եղել, մենք տէր ենք կանգնում մեր պատմութեանը»: Մենք էլ մամլոյ հաղորդագրութիւն ուղարկեցինք՝ ասելով. «այո՛, զօրամասի պատմութիւնը կայ, սակայն դրանից առաջ ուայ պատմութիւն էլ գոյութիւն ունի: Դրանից առաջ այնտեղ եղել է Սուրբ Յակոբ հայկական գերեզմանատունը»: Խորհրդանշական տապանաքար պատրաստեցինք զբօսայգում, որը զբօսայգու մարդկանց ուշադրութիւնը գրաւեց եւ լուսանկարելով տարածեցին ողջ աշխարհով մէկ:*

Եթէ չեմ սխալւում, Կեզի զբօսայգում շինարարական աշխատանքների ժամանակ տապանաքարեր էին յայտնաբերուել:

*Այո՛, ըստ էութեան, ցանկացանք շեշտել, որ այս երկրում որտեղ ուզում էք փորէք, հայերի հետքերին էք հանդիպելու. դրանք կա՛մ եկեղեցու պատեր են լինելու, կա՛մ էլ մարդու ոսկորներ: Մենք պէտք է այնտեղ զբօսայգու վերաբերեալ մի բան ասէինք եւ ասացինք. «Այո՛, ժամանակին մեր գերեզմանատունը մեր ձեռքից վերցրեցիք, սակայն մեր զբօսայգին չենք տալու, չէք կարողանալու վերցնել»: Իրօք չտուեցինք: Մարդիկ մասնակցեցին, աջակցեցին: Շատ հետաքրքիր բան տեղի ունեցաւ. Մարդիկ Թուրքիայի դրօշներով գալիս եւ ասում էին՝ «ճ, հայերն էլ են այստեղ»: Լուսանկարւում էին տապանաքարի մօտ: Պատկերացրէք՝ մեզ համար էլ էր մի փոքր տարօրինակ:*

ԱԶԿ-ի իշխանութեան գալուց յետոյ Թուրքիայում սկսուեցին Քրտական եւ Հայկական նախաձեռնութիւնները: Ինչպէ՞ս էք գնահատում յատկապէս Հայկական նախաձեռնութիւնը: Թուրքիայի հայ համայնքի համար յատկապէս ո՞ր կուսակցութեան օրակարգն ու ծրագիրն է աւելի ձեռնտու:

*Ե՛ւ ԱԶԿ-ում, ե՛ւ ԺՀԿ-ում մի շարք հայեր կան: Իրավիճակ հետեւեալն է. այո՛, վերջին 10 տարուայ ընթացքում ԱԶԿ-ի իշխանութեան գալուց յետոյ հայերի իրաւունքները վերականգնւում են՝ բռնագրաւուած ունեցուածքը վերադարձւում է, սակայն սա հայերի գեղեցիկ աչքերի համա՞ր է կատարւում: ԵՄ ինտէգրման գործընթացով է պայմանաւորուած: Եւ կամ Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման արձանագրութիւնները Թուրքիայի եւ Հայաստանի ցանկութեա՞մբ էին: Նալպանտեանի եւ Տաւուտօղլուի՝ արձանագրութիւնները ստորագրելու պահին նրանց հետեւում կանգնած Շուէյցարիայի, Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի արտգործնախարարներին պէտք է տեսնել: Այսինքն՝ ոչ ոք ոչ մէկի գեղեցիկ աչքերի համար չի անում: ԱԶԿ-ն ամէն անգամ այս զարգացումները մատուցում է որպէս շնորհ՝ «տեսէք, վերադարձնում ենք ձեր իրաւունքները»: ԱԶԿ-ի հայ համայնքի ներկայացուցիչները եւս ասում են՝ «նայէք, ԱԶԿ-ն մեզ օգնում է»: Բնականաբար, իշխանութեան հետ պրագմատիկ յարաբերութիւններ հաստատելը, աշխատանքային կապեր ստեղծելը վաքըֆների նախագահների, հարուստ հայերի համար կարեւոր է, եւ սա միայն Թուրքիայում չէ. համայն աշխարհում է այդպէս: ԱԶԿ-ն իրեն համարում է պահպանողական ժողովրդական կուսակցութիւն, սակայն այդքան էլ ժողովրդավար չի երեւում: Թուրքիայի հայ համայնքը ներսից պահպանողական է, սակայն վախենում է, երբ երկիրն է դառնում պահպանողական: ԱԶԿ-ի այդ իսլամիստ պահպանողական թեւը վախեցնում է հայերին, եւ նման իրավիճակում «իսլամիստներն են գալիս» ասելով՝ գնում եւ իրենց ձայնը տալիս են ԺՀԿ-ին: Սրանք աշխարհիկներն են: Սակայն երբ նայում ենք ԺՀԿ-ի անցեալին, տեսնում ենք Միութիւն եւ առաջադիմութիւն կուսակցութեանը՝ այսինքն Հայոց Ցեղասպանութիւնն իրականացնողներին: 1915 թ. չաւարտուեց գործընթացը, այն շարունակուեց: Հանրապետութեան հաստատման առաջին շրջանում պատերազմական յանցագործ ճանաչուած անձինք Մալթայի աքսորից յետ վերադարձան: Այս մտայնութիւնը ԺՀԿ-ի մէջ մինչեւ 60-ական թթ. առկայ էր: Այժմ դրսից նայողի աչքով խորհրդարանին նայէք՝ ԱԶԿ, ԺՀԿ, ԱՇԿ, ԽԺԿ: ԱԶԿ-ն իսլամիստական է, ինչի՞ հետ է ասոցացւում: Անմիջապէս Ապտուլ Համիտը կամ մէկ այլ անուամբ Կարմիր սուլթանն է մարդու միտքը գալիս: ԺՀԿ ասելիս՝ Միութիւն եւ առաջադիմութիւն կուսակցութիւնը: ԱՇԿ-ն, ըստ էութեան, ֆաշիստական կուսակցութիւն է: ԺԽԿ ասելիս՝ քրտերն ու Համիտեան գնդերը: Սակայն այստեղ մի փոքր տարբերութիւն կայ. բազմաթիւ քուրտ մտաւորականներ, ԽԺԿ-ի անդամներ հայերից ներողութիւն են խնդրում, մէկ միլիոն տոլար տալով՝ վերանորոգում են Տիարպեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցին: Սակայն, բնականաբար, բոլոր քրտերն այդպէս չեն մտածում: Այս թեմաների վերաբերեալ խորհրդարանում միայն ԽԺԿ-ն եւ ԺՀԿ-ն են խօսում: Հիմա դրսից նայելու դէպքում չպէտք է որեւէ կուսակցութեան հետ համագործակցել, սակայն որպէս «Նոր Զարթօնք»՝ մենք աջակցում ենք ԽԺԿ-ին իր այդ առանձնայատկութեան համար ԺՀԿ-ին, որը բոլոր փոքրամասնութիւններին ներառում է իր մէջ:*

*Վերադառնալով ԱԶԿ-ի քաղաքականութեանը՝ պէտք է ասել, որ եթէ մենք այս երկրում խօսում ենք Ցեղասպանութեան մասին, հանգիստ շնչում ենք, դա ԱԶԿ-ի շնորհը չէ, այլ պայմանաւորուած է ԵՄ ինտէգրման գործընթացով եւ ամենակարեւորը՝ Հրանդ Տինքի սպանութեամբ: Այսօր աւելի ազատ խօսելու եւ հանգիստ շնչելու համար մենք մեծ գին ենք վճարել, եւ այդ գինը Հրանդ Տինքն է:*

Այսինքն, եթէ այսօր ԵՄ ինտէգրման գործընթացը դադարեցուի, Թուրքիան այն կէտից, որին հասել է, յետքա՞յլ է կատարելու:

*Արդեօ՞ք նման գործընթացում չենք: ԵՄ ինտէգրման գործընթացը կանգնեցուել է, որի արդիւնքում երկրում հակաժողովրդավարական գործընթացներն աճել են: Երկու գործընթացները պայմանաւորուած են մէկը միւսով. մէկը միւսի արդիւնքն ու պատճառն են: Ինչպէս արդէն ասացի, առկայ է ԵՄ ինտէգրման գործընթացը եւ Հրանդ Տինքի սպանութիւնը: Մենք Հրանդ Տինքի սպանութիւնից յետոյ ենք սկսել աւելի հանգիստ խօսել: Պէտք է պայքարենք, անցնենք պետութեան գծած սահմանը եւ պայքարենք մեր իրաւունքների համար:*

*«Նոր Զարթօնք»ը ստեղծուել է իրաւունքներին տէր կանգնելու, համախմբուելու եւ կազմակերպուելու համար: Մենք Թուրքիայում մի խօսք ունենք. «Այս երկրում բնակուողների 99 տոկոսը մուսուլման է»: Անգամ եթէ 1 տոկոս կամ 0.1 տոկոս լինենք, մէկ է՝ մենք այստեղ ենք: Մեզ սպաննեցիք, ոչնչացրեցիք, բնականաբար, սա ողջ ժողովրդի համար չեմ ասում, այլ այդ ժամանակուայ ղեկավարների համար, սակայն մենք դեռեւս այստեղ ենք եւ լինելու ենք, մենք չենք վերջանալու: Անգամ եթէ այսքան քիչ մնանք, մէկ է՝ մեզ այս հողերից չէք կարողանալու դուրս վռնտել:*

HayastanInfo.net

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ
Յոկտեմբեր 3, 2014
ՆՍՄՄ ԵՒ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Գրաւուած օր
Նոյեմբեր 15, 2014
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
60 Ամեակի Շքեղ հանդիսութիւն

## ԻՐԱՔՆ ՈՒ ՍԻՐԻԱՆ ՀԵՏԵՒՈՒՄ ԵՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՕՐԻՆԱԿԻՆ

*Շարունակուած էջ 6-էն*

*շարժումներից բաղկացած սուննի խմբաւորումը կարողացաւ միաւորուել եւ առաջ գնալ: Բաղդադն այսօր անկայուն, չփոթ իրավիճակում է: Բանակը փորձում է պահպանել հաւասարակշռութիւնը, մինչ քուրդերը պայքարում են իրենց տարածք ապահովելու համար:*

*Եռակողմ պատերազմ է, որտեղ աւելի քան 20 կլաններ են ներառուած: Նրանցից ոմանք ժամանակաւոր դաշնակիցներ են դարձել: Բայց ոչ մի խմբաւորում այնքան ուժեղ չէ խորտակելու համար միւսներին: Սուննիները, շիաներն ու քուրդերն իրենց տարածքներն ունեն: Ճիշտ է, որոշ ցեղեր եւ կլաններ կարող են կործանուել, բայց հաւանական ելքն այն է, ինչ կատարուեց Լիբանանում. ենթա-ազգային խմբաւորումների մշտական իշխանութիւնը, որոշակի համաձայնութեան հետեւանքում, հաւանական է ստեղծի մի պետութիւն, որտեղ փոքրիկ խմբաւորումները կ'ունենան կամ կը պահպանեն իրենց իշխանութիւնները, որովհետեւ հաւատարմութիւնն է թելադրում ամէն ինչ: Սահմանը Լիբանանի եւ Սիրիայի միջեւ միշտ էլ անորոշ է եղել: Այժմ նոյնքան անորոշ է նաեւ սահմանը Սիրիայի եւ Իրաքի միջեւ: Սակայն այդ սահմանները երբեք էլ հարազատ չէին տարածաշրջանի համար: Դրանք պարադրուած էին եւրոպացիների կողմից, նրանց իսկ շահերից ելնելով: Այնպէս որ, միասնական Իրաք ստեղծելու եւ պահպանելու գաղափարը իրականութեանը չի համապատասխանում: Երբեք էլ չի եղել միասնական Իրաք: Եղել է սոսկ յօրինուած թագաւորների եւ ինքնակոչ բռնապետերի պատրանքային միասնութիւն: Պատերազմը հնարաւոր է չշարունակուի այնտեղ, բայց ինչպէս Լիբանանում, այն այնքան է հիւծելու խմբաւորումներին եւ կլանների անդամներին, որ ի վերջոյ բանակցելու են միմիանց հետ:*

*Շիաների, սուննիների եւ քուրդերի միասին ապրելու գաղափարը բնաւ էլ երեւակայութեան արդիւնք չէ: Երեւակայութեան արդիւնք է սակայն այն, որ Մ. Նահանգները, իր շահերից ելնելով, փորձում է Օսմանեան կայսրութեան բեկորներից վերստեղծել ֆրանս-բրիտանական մի նոր կառոյց: Բայց Մ. Նահանգները չունի այն լծակները, որ խաղաղեցնի իրաքցիներին եւ սիրիացիներին: Ժամանակին նա չկարողացաւ խաղաղեցնել լիբանանցիներին: Իսկ իսլամական պետութեան յառնումը լուրջ սպառնալիք է Մ. Նահանգների համար: Նաեւ շիաների, քուրդերի եւ միւս սուննիների համար: Ինչպէս Լիբանանում, խմբաւորումների բազմաքանակութիւնը ստեղծում է փոխադարձ ազդեցութեան մի ուժ, որն ընդունակ է խեղելու շատ հեռուն գնացողների ջանքերը:*

*Այստեղ երկու հարց է առաջ գալիս: Ինչքա՞ն առաջ է գնալու արաբական աշխարհի ազգային պետութիւնների մասնատումը: Կարծես այն սկզբնաւորուել է Լիպիայում, բայց դեռ այլ տարածքներում չի արմատաւորուել: Սայքս-Պիկօ տարածքներում այն կարող է քաղաքական կազմաւորում լինել: Հետաքրքրական է լինելու դիտել իրադրութիւնը Սաուդեան թերակղզում:*

*Երկրորդ հարցն այն է, թէ ի՞նչ են անելու տարածաշրջանային տէրութիւնները այդ գործընթացի կապակցութեամբ: Թուրքիան, Իրանը, Իսրայէլը եւ Սաուդեան Արաբիան չեն կարող հանգիստ լինել ոչ այս աստիճանի մասնատումներից, ոչ էլ առաւել էկզոտիկ խմբաւորումների առաջխաղացումներից: Իրաքում քրդական կլանի առաջացումն անպայման ցնցումներ է պատճառելու Թուրքիայում եւ Իրանում:*

*Ըստ պատմական նախադէպի, Թուրքիայում օսմանեան մտածելակերպի նոր դրսեւորումը կարող է ներշնչել թուրքերին շարժուելու դէպի հարաւ եւ տարածաշրջանին պարտադրելու ընդունելի մի կարգ ու կանոն: Դժուար է պատկերացնել այս, բայց եթէ նոյնիսկ Թուրքիան կարողանայ միաւորել արաբներին, դա տեղի է ունենալու այն պատճառով, որ վերջիններիս ուղեղներում դեռեւս թարմ են թուրքական օկուպացիայի յիշողութիւնները: Այս բոլորից անկախ, ժամանակն է չմտածել Սիրիան եւ Իրաքը կայունացնելու մասին, այլ սկսել մտածել այլեւս չգործող արհեստական պետութիւններից դուրս մի նոր դինամիկայի մասին: Դրա համար մենք պէտք է վերադառնանք Լիբանան, առաջին երկիրը, որ մասնատուեց, եւ որտեղ կլաններն իրենց ճակատագրի տէրը դարձան, որովհետեւ պարտաւորուած էին: Այժմ մենք տեսնում ենք լիբանանեան մոդելի տեղաշարժը դէպի արեւելք: Հետաքրքրական է լինելու տեսնել, թէ էլ որտե՞ղ է այն տարածուելու:*

## ՕՐԸ ՀԱՃԵԼԻՕՐԷՆ ՍԿՍԵԼՈՒ ՀԻՆԳ ՁԵՒ

*Շարունակուած էջ 17-էն*

*քննանալու ժամանակը, ան կը կորսնցնէ նաեւ կատակելու զգացումը: Ինչպէս կը բացատրէ Հարվըրտի բժշկական դպրոցի փրոֆէսըր մը՝ յագեցած քունի պակասը կը խոչընդոտէ զգացումները ճիշդ ընկալելը:*

*- Մարզանք ըրէք.*

*Քանի մը թեթեւ վարժութիւնները պիտի ստիպեն սրտին աւելի թեթեւ աշխատելու ամբողջ օրուան ընթացքին: Հետաքրքրական է, որ հինգ վայրկեան մարզումները բնութեան գրկին մէջ պիտի բարձրացնեն տրամադրութիւնը:*




## ՊՈՂՊԱՏԻ ՊԷՍ ՍԵՐ

*Շարունակուած էջ 16-էն*

*-Պաստառը ձեռագործ է Երեւանից:*

*Այնուհետեւ Անդրանիկը մէկ-մէկ լուսանկարների ինքնութիւնը յայտնեց: Ուշադրութիւնս գրաւեց շրջանակի մէջ առնուած մեր ոսկեղնիկ թուչնագիր գոյնզգոյն տառերը, կողքին մի ուրիշ շրջանակ մեր Տէրունական «Հայր Մեր» աղօթքը, այն կողմի պատից կախուած էջմիածնի պատկերը, Ծիծեռնակաբերդը եւ ցուցադրւող արձանիկներ եւ խաչքարեր Հայաստանից բերուած: Ահա հայի տուն, հայկականութեամբ բուրող տուն, հայրենիքից հեռու, բայց հայրենիքով ապրող:*

*Արդէն գիշերը տարածել էր իր աներեւոյթ թեւերը, սենեակը լուսաւորւում էր ելեկտրական լոյսերով: Սենեակում երթեւեկութիւնը դադարեց, ճաշասեղանը պատրաստ էր, տան տիկինը հրաւիրեց սեղանին: Համադամ կերակուրներով զարդարուած սեղանին տեղ եմ գրաւում հայրիկի կողքին, որի անունը Յակոբ հնչեց: Սենեակով մէկ տարածուել էր հայ մօր բծախնդրութեամբ պատրաստած դոլմայի, փիլաւի, կարմրցրած հաւի ախորժաբեր բուրմունքը:*

*Պրն. Յակոբը «Հայր Մեր» աղօթքով սեղանը օրհնեց, ապա սկսուեց կեր ու խումը: Այս է եղել մեր պապերի աւանդական սովորութիւնը, ամէն անգամ ճաշի նստելիս պարգեւուած բարիքի համար շնորհակալ լինել, որպէսզի սեղանից չպակսի ընտանիքի հանապազօրեայ հացը հեռու պատերազմներից, աղէտներից եւ երաշտից: Կենացս խմուեց ցանկանալով յաճախակի այցելութիւն . -օջախը ընդունել որպէս հարազատի օջախ:*

*Բոլորով միասին մեր ժողովրդի կենացը խմեցինք ցանկանալով դժուարութիւնները համբերութեամբ յաղթահարելու կամք եւ մեր ազատամարտիկներին յաղթութիւն:*

*Կենաց խմելու հերթը ինձ էր հասել, բաժակը ձեռքիս յօտընկայս հրաւէրի համար շնորհակալութեան խօսքից յետոյ աւելացրեցի՝*

*-Ինչպէս գիտէք ընտանիքը ազգի, ժողովրդի մէկ բջիջը, մասնիկն է, ինչպէս տարբեր առարկաների եւ նիւթերի կապակցութեամբ ամենափոքր տարրը հիւլէն է , Հիւլէների կառչուածութեամբ մէկը միւսից առարկան կամ նիւթն է գոյանում, օգտագործելի դառնում: Ինչ ասել կ'ուզեմ այս օրինակով, այն որ հզօր ազգ, ժողովուրդ ունենալու համար, անհրաժեշտ է ունենալ գիտակից եւ տեղեակ՝ ազգասիրութեամբ եւ հայրենասիրութեամբ ու վեհ արժանիքներով զօտեպնդուած ընտանիքներ, ահա այս պիտի լինի իւրաքանչիւր հայ ընտանիքի առաքելութիւնը թէ՛ սփիւռքում եւ թէ հայրենիքում: Ուրախ եմ ասելու, որ այսօր այսպիսի շնորհալի ընտանիքի հետ ծանօթացայ, նախանձախնդրութիւնը մեր արժէքների պահպանման եւ սերունդներին փոխանցման իւրաքանչիւրիս սեպուհ պարտականութիւնը պիտի լինի:*

*(Շարունակելի)*

## ՁԵՌԱԳԻՐԸ ԱՒԵԼԻ ՕԳՏԱԿԱՐ Է

*Շարունակուած էջ 17-էն*

*Անհրաժեշտ է նշել, որ ձեռագիրը նաեւ կ'ամրապնդէ ուղեղի այս բաժիններու միջեւ հաղորդակցութիւնը եւ համագործակցութիւնը:*

*Այլ փորձարկումի մը շնորհիւ գիտնականներ յայտնաբերած են թէ ձեռագրութեան ժամանակ ուղեղին մէջ միեւնոյն ժամանակ կ'աշխուժանան տարբեր մասեր: Այս երեւոյթը գոյութիւն չունի տպագրութեան ժամանակ:*

*Ընդհանուր առմամբ, ձեռագրութիւնը աւելի օգտակար է քան տպագիր ստեղծագործութիւնը: Ձեռագիր ստեղծագործութիւնը առաջին հերթին կ'ամրապնդէ ուղեղին եւ մատներու նուրբ շարժումներուն միջեւ համագործակ ցական կապը: Երկրորդ՝ կը թարմացնէ կեդրոնացումը, որովհետեւ ձեռագրութիւնը կը պահանջէ բացառիկ ուշադրութիւն եւ կեդրոնացում:*

*Երրորդ՝ ձեռագրութիւնը կը կարօտի լուրջ փորձերու: Աշա - կերտներ տարիներ ետք է, որ կը յաջողին գեղեցիկ եւ ճշգրիտ ձեւով գրել իրենց սորված տառերը: Ձեռագրութեան ժամանակ ուղեղի աշխոյժ բաժինները հանգիստ կը մնան տպագրութեան պարագային:*

*Միացեալ Նահանգներու մէջ գտնուող Ինտիանա Համալսարանի հոգեբանական բաժանմունքի հետազօտական խումբը եւս կատարած է հետաքրքրական ուսումնասիրութիւն մը, որուն արդիւնքները ցոյց տուած են թէ միայն ձեռագրութեան պարագային է, որ անհատը գրած ժամանակ նաեւ կը կարդայ բառերը: Հետեւաբար, մասնագէտները կը թելադրեն, որ փոքրիկ աշակերտները ընդօրինակութեան փոխարէն ըմբռնելով գրեն նախադասութիւնները, որպէսզի մարզեն ուղեղի ընթերցանութեան կարողութիւնը:*

*Ի դէպ, գեղագրութիւնը ալ աւելի օգտակար է քան սովորական ձեռագիրը, որովհետեւ գեղագրութեան ժամանակ մատներու շարժումները կ'ըլլան աւելի բարդ եւ մանրամասն, իսկ ստեղծագործութիւնը կ'ըլլայ աւելի անձնական եւ ենթակայական: Գեղագրութիւնը կը զարգացնէ անձի մը անհատականութեան ըմբռնումը եւ կը նպաստէ ինքնավստահութեան:*

*Իսկ Ուաշինկթոն համալսարանի կողմէ կատարուած ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ կապ մը՝ ձեռքի շարժումներուն եւ մտքի արտասովոր աշխուժութեան միջեւ: Վերճինիա Պէրնինկըրի գլխաւորութեամբ եւ տարբեր տարիքներու աշակերտներու մասնակցութեամբ ամերիկեան ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ թէ աշակերտները աւելի մեծ թիւով բառեր, աւելի արագ եւ բարձրորակ գաղափարներ կ'արտայայտեն երբ օգտագործեն ձեռագիրը քան երբ աշխատին տպագրութեամբ:*

*Հետաքրքրական է, որ ձեռագրութիւնը ուղեղին կ'օգնէ երաժշտական գործիքի մը պէս: Ճիշդ է, որ բոլորս կարողութիւն չունինք զբաղելու երաժշտութեամբ, սակայն բոլորիս հասանելի են թուղթն ու գրիչը: Իսկ համակարգիչէ գրկուող փոքրերու պարագային, մի մտահոգուիք անոնք կրնան օգտուիլ ձեռագրութեան բարիքներէն:*

*ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ*


ՀԱՅՐԵՆԻՔԸ ԱՄԷՆ ԲԱՆԷ ՎԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ
ARMENIAN INDEPENDENCE DAY
FESTIVAL
Փառատօն
Կազմակերպութեամբ Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
SUNDAY SEPTEMBER
21, 2014
VERDUGO PARK
GLENDALE
1621 Canada Blvd., Glendale, CA, 91206
Starting at 11:00 am
LIVE MUSIC
DANCING
ART WORK EXIBITION
KIDS GAMES
ARMENIAN FOOD
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ
ԵՒ ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
To reserve your vendor booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938